AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 1

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017 ՈՒՐԲԱԹ 40(5488)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ո՞ւմ դեմ է մարտնչում ռուսական հանդեսը՝ գիտությա՞ն, թե՞ աշխարհի



Ռուսական «Գիտություն եւ աշխարհ» (Science and World) անգլալեզու հանդեսում տպագրվել է Ալի Հասանովի «Խոջալուի ցեղասպանությունը. պատճառներ, հետեւանքներ եւ դրա միջազգային ճանաչումը» վերնագրյալ հոդվածը, որ ըստ «Ազերթաջի» հոկտեմբերի 25-ի գերմանական լրատվության, «գիտական» որակումն ունի: Նույն աղբյուրը ծանուցում է, թե հոդվածում հիմնավոր ներկայացված է ադրբեջանցիների հանդեպ Հայաստանի 200- ամյա էթնիկ մաֆրազման ցեղասպան քաղաքականությունը, իսկ Խոջալուն դիտարկում Խատինի, Հիրոսիմայի, Նագասակիի, Ռուանդայի, Սրեբրենիցայի եւ Հոլոքոսթի հետ նույն ողբերգական շարքում: Մտքովս չէր անցնի, թե Խոջալուի մասին, մեղմ ասած, որեւէ հավակնոտ շարադրանք մեր օրերում տեղ կգտներ ռուսական որեւէ հանդեսում, մանավանդ՝ գիտական պիտակն ունեցող: Արծաթի փա՞յլն է այդքան է կուրացրել ռուս «գիտականին», թե՞ սա անհամեմատելիի՝ Հոլոքոսթ ապրած ժողովրդին (ասել է, թե աշխարհին) նետված կեղտոտ ձեռնոց է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Հատկանշական հոբելյան Բոստոնում

Առաջիկա օրերին, նոյեմբերի 2-ին եւ 3-ին, Բոստոնում յուրահատուկ կերպով նշվելու է հայկական անգլիատառ հնագույն թերթի՝ «Արմենյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթահանդեսի 85-ամյակը: Յուրահատուկ՝ հայաստանցիներիս համար, որ սովոր ենք նման հանդիսությունները վերածել անձնագովության, ինքնափառաբանանքի, գովեստաբան խոսքերի, շքանշանների ու գովասանագրերի մատուցման խրախճանքի, որի ավարտին, սովորաբար, թե՛ ստացողների, թե՛ մատուցողների կոկորդում մնում է շքարախեղդության զգացումը: «Միրոր-Սփեքթեյթըր» իր հոբելյանը նշում է սիմպոզիումով, որի թեման որքան կարեւոր, նույնքան արդիական է. «Լրագրություն եւ կեղծ լուրեր. Ցեղասպանություն եւ Ղարաբաղ» (Journalism and Fake News . The Armenian Genocide and Karabagh) վերնագրով, մասնակցությամբ ամերիկյան եւ անգլիական մամուլի հայ եւ օտար հայտնի անունների:

Սա հենց այն է, որի անհրաժեշտության մասին գրել էի ամիսներ առաջ, երբ Երեւանում «մենք ասենք- մենք լսենք» սկզբունքով կազմակերպվում էր լրագրողների համահայկական չգիտեմ քանիերորդ բազմամարդ եւ ավելորդամարդ համաժողովը: Մինչդեռ, հատկապես մեզ պարտադրված «քարոզչական պատերազմի» պայմաններում, շատ ավելի փիչ միջոցներ ծախսելով անհրաժեշտ էր մեր դիմագրաված հիմնահարցերի շուրջ ներգրավել օտար լրատվամիջոցներում աշխատող հայ լրագրողներին ու նրանց օտարազգի գործընկերներին, ոչ թե նրանց համոզելու (իսկական լրագրողների մոտ դա հակառակ ազդեցությունն է թողնում), այլ նրանցից լսել-սովորելու տեղեկատվական ներկայիս բարդ հարաբերություններում բազմաթել հանգույցներից ճիշտ թելերը քաշելու իմացությունը, միաժամանակ նրանց ներկայացնելու մեր դիմագրաված խնդիրների բուն էությունը:

Հենց այս իմաստով կարծում եմ հատկանշական է լինելու նաեւ 85-ամյակի նշման 2-րդ օրը, նոյեմբերի 3-ը, Բոստոնի «Նյուտոն Մարիոթ» հյուրանոցի մեծ դահլիճում Հարվարդի համալսարանի Մարդասիրական նախաձեռնության շարժման ղեկավար Անահիտ Նահիրյանի հանդիսավարությամբ կայանալիք գալա-ընթրիքը, որի ընթացքում երախտագիտական պարգեւների են արժանանալու միջազգային մամուլի երեք ներկայացուցիչներ՝ «Ինդիփենդենտ» (The Independent) անգլիական թերթի (այժմ՝ համացանցային) Միջին Արեւելքի բազմամյա թղթակից, ըստ ինձ՝ ապրող ամենահայտնի հետաքննող լրագրող, Բրիտանական մամուլի ամենամյա մրցանակի յոթնակի դափնեկիր եւ տարվա լավագույն լրագրողի տիտղոսակիր Ռոբերտ Ֆիսքը, բրիտանական նշանավոր մեկ այլ պարբերականի՝ Թուրքիայում «Էկոնոմիստ» (The Economist) շաբաթահանդեսի նախկին թղթակից, Diken եւ Al Monitor լրատվամիջոցների սյունակագիր Ամբերին Զամանը, եւ ամերիկյան Այլընտրանքային ռադիոյի (Alternative Radio) հայազգի հիմնադիր-տնօրեն Դեյվիդ Բարսամյանը: Լրագրողներ՝ որոնց կարդում-լսում են միլիոնավոր մարդիկ, եւ որոնք տարիներ շարունակ ծառայում են արդարությանը եւ ճշմարտությանը, իրենց մասնագիտության նկատմամբ անզիջող հավատարմությամբ, բոլոր առիթներով պաշտպանելով նաեւ հին ու նոր անարդարությունների ենթակա մեր ժողովրդին:

Այսպիսով, փաստորեն, 85-ամյա «Միրոր» ու նրա մեջքին կանգնած Ռամկավար Ազատական կուսակցությունը ստանձնել են հայկական կառավարության կարեւոր բացթողումներից մեկը դույզն չափով լրացնել-ծածկելու պարտականությունը, որը վաղուց պիտի կատարած լինեին մեր պետական համապատասխան օղակները, մանավանդ երբ թուրք-ազերիական հակահայ քարոզչական մեքենան աշխատում է շոգեմոնդ՝ չկանգնելով անպարկեշտ ու հանցագործ ոչ մի գործարքի առջեւ:

Անշուշտ, տոնակատարության ընթացքում երախտագիտության խոսքեր կհնչեն եւ մեկ առ մեկ կիիշատակվեն նաեւ թերթը նախաձեռնողները եւ հաջորդական 11 խմբագիրները՝ սկսած հիմնադիր խմբագիր Եղիա Չրաքյանից՝ հասնելով մինչեւ ներկա խմբագիրը՝ պրոֆեսիոնալ լրագրող Ալին Գրիգորյանը, դրվատանքի խոսք ասելով նաեւ գլխավոր աշխատակիցների եւ հատկապես 20 տարուց ի վեր խմբագրականների հեղինակ Երվանդ Ազատյանի հասցեին, որի հոդվածների մեծ մասը թարգմանաբար տպագրվում է նաեւ մեր թերթում: Կշեշտվի նաեւ թերթի հավատարակիչ, լայնախոհ ու ծանրախոհ նկարագիրը, ընթերցողին միայն ստույգ եւ հավատի տեղեկություններ մատուցելու նրա նախանձախնդիր կեցվածքը, իր բովանդակության բազմակարծությամբ ամերիկահայության համար վստահելի ֆորում հանդիսանալու նրա վաստակը:

Սակայն չգիտեմ, պատշաճ կերպով կբացատրվի՞ արդյոք այն՝ առաջին հայացքից տարօրինակ իրականությունը, որ հոբելյար թերթը Ռամկավար Ազատական կուսակցության օրգանը լինելով հանդերձ՝ կուսակցական թերթ չէ: Այն զերծ է նեղմտությունից ու կողմնակալությունից, քանզի ծառայում է ողջ հայությանը եւ առաջին հերթին՝ ամերիկահայությանը, ինչպես իրեն պահող ու սնող կուսակցությունը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Քողազերծումներ պաշտպանության նախարարից

Միգուցե խորհրդանշական բան կա այն հանգամանքի մեջ, որ բանակը բարեփոխելու փաթեթը խորհրդարանում քննարկվում էր տասնութ տարի առաջ՝ 1999 հոկտեմբերի 27-ին, նույն խորհրդարանում կատարված արյունոտ ոճիրի տարելիցի նախօրեին: Բանակի հիմնադրումը եւ կայացումը կապվում են հոկտեմբերի 27-ին զոհ գնացած Վազգեն Սարգսյանի հետ: Իսկ Հայաստանի ազգային անվտանգության ու պաշտպանության առջեւ ծառացած նոր խնդիրները լուծել փորձող բարեփոխումների օրենսդրական կարգավորումներն այս օրերին խորհրդարանում ներկայացնում էր մի ուրիշ Սարգսյան՝Վիգեն, որը նույնպես հավակնոտ ծրագրեր ունի ոլորտի վերաբերյալ, ինչպես ժամանակին Վազգեն Սարգսյանը:

Հիշողության դասերը մինչեւ հիմա էլ նոր ծալքեր են մատուցում ու նոր հետեւություններ ծնում, որոնք բոլորն էլ, վստահ եմ, մի օր մեկտեղվելու ու ներկայանցվելու են հայերիս, ուշ թե շուտ:

Սա՝ ա՛յս օրվա խորհրդաբանությամբ:

Վերադառնանք հայոց բանակում զգալի փոփոխություններ նախատեսող երկու օրինագծերից՝ «Պաշտպանության մասին» եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին», հատկապես երկրորդին, քանի որ, չնայած խորհրդարանական թեժ քննարկումների լայն լուսաբանմանը, թեման առնչվում է ամեն ընտանիքի եւ մեր ընթերցողին եւս հետաքրքրում է:

Երկրորդ օրինագիծը, որը **Վիգեն Սարգսյանը** բնորոշեց որպես երկրի անվտանգությունն ու պաշտպանունակությունն ամրապնդող, մի շարք հայեցակարգային փոփոխություններ է առաջարկում ոլորտում:

Վիգեն Սարգսյանի խոսքով՝ նախագծի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հայրենիքի պաշտպանությանը պետք է մասնակցեն եւ բանակում ծառայեն բոլոր զինապարտներ անձինք, իսկ տարկետման իրավունքից օգտվելու կամ զինծառայությունից ազատման դեպքերը պետք է լինեն թափանցիկ եւ հասանելի հանրությանը:

Այդպիսով՝ հատկապես խստացումներ կան այն իրավահարաբերություններում, որոնք վերաբերում են զինվորական ծառայության ազատմանն ու զորակոչից տարկետումների տրամադրմանը: Պարտադիր զինվորական ծառայությունն, իհարկե, էլի խանգարու ամիս է սահմանվում, բայց օրինագծով պայմանագրային կարգով ծառայության այլ ժամկետ եւս առաջարկվում է: Այսպես՝ աղմուկ հանած եւ ուսանողների որոշ շերտերի բողոքի ցույցերի պատճառ դարձած տարկետում տալու կարգում պետպատվերով բարձրագույն կրթություն ստացողը կարող է տարկետումից օգտվել, եթե այնուհետեւ պատրաստ է ծառայելու որպես սպա՝ ստանալով սպայի աշխատավարձ եւ ուսման վարձի փոխհատուցում՝ այդ առումով ներմուծվում է պայմանագրի հիման վրա երեք տարվա ծառայություն: Զորակոչի ենթակա են տասնութ տարին լրացած բոլոր արական սեռի քաղաքացիները՝ մինչեւ

⇨3

ՀԱՄԱՌՈՏ

Նույն գազը՝ նույն գնով

Ռուսաստանը 2018-ին էլ չի թանկացնի Հայաստան մատակարարվող գազի գինը, որն, ինչպես նշել է ՀՀ փոխվարչապետ **Վահե Գաբրիելյանը**՝ տարածաշրջանում ամենաէժանն է: Գազի գինը չբարձրացնելու մասին հայտարարել է ՌԴ վարչապետ **Դմիտրի Մեդվեդեւը**, որը ԵԱՏՄ միջգերատեսչական նիստի շրջանակներում պաշտոնական այցով Երեւանում էր: Ստացվում է, որ հայ-ռուսական գազային պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մեկ տարով, քանի որ այն գործելու էր մինչեւ 2018-ը:

Ստացվում է նաեւ, որ Հայաստանն ու Ռուսաստանը գազի պայմանագրի շուրջ բանակցություններ են վարել, ինչի մասին, սակայն, որեւէ տեղեկություն չեն հայտնել:

Ու մի վատ լուր էլ. եթե Հայաստան մատակարարվող գազի գինը մնում է նույնը, նշանակում է, որ այն չի էժանանում, ավելին՝ 2018-ին էլ չի էժանանալու:

Հայաստան-Ռուսաստան. տարբեր թվեր

Կարապետյան-Մեդվեդեւ հանդիպման ընթացքում ՀՀ վարչապետը գոհունակությամբ նշել է, որ Հայաստան-Ռուսաստան առեւտրաշրջանառությունն անցնող տարում աճել է 23 տոկոսով: ՌԴ վարչապետն իր հերթին հայտնել է, որ իր մոտ ուրիշ թվեր կան, ըստ որոնց առեւտրաշրջանառությունն իրականում աճել է 30 տոկոսով:

Իհարկե կարեւորն այն է, որ աճել է, բայց պակաս կարեւոր չէ՝ պարզելը, թե Հայաստանի՞ վարչապետի օգնականները հաշվել չգիտեն, թե՞ Ռուսաստանի օգնականներն են նրան խաբում: Ամեն դեպքում Մեդվեդեւն առաջարկել է Կարապետյանին հիմք ընդունել իր մոտ եղած թվերը, Կարապետյանն էլ համաձայնել է:

Նոր բացահայտումներ Դրոյի անցյալի վերաբերյալ

էջ 8

Ջորջ Սորոսն՝ ահաբեկիչ

էջ 8

Վանի հերոսամարտի աննկուն ղեկավարը՝ Արմենակ Եկարյան

էջ 9

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Աղաւաղուած այբուբեն

Ամբողջ աշխարհը փոխազդեցութիւններով կ՚ապրի, ամենափոքր սաղմէն մինչեւ անջրպետն ու մոլորակները, եւ այս փոխազդեցութիւններն են որ աշխարհի հաւասարակշռութիւնը կը պահեն: Սակայն ազգային տեսանկիւնէ դիտուած՝ փորձանք են անոնք, քանի որ ազդեցութիւնները կուտակուելով եւ կուտակուելով կրնան աղարտել իսկական ինքնութիւնը ազգի մը դիմագիծին, անոր հաւատին, լեզուին, մշակոյթին:

Չտարածուինք ու խօսինք մենք մեր մասին: Հայերս, պատմութեան ընթացքին զանազան «Հայաստաններու» մէջ ապրելով, ենթարկուած ենք տարբեր ազդեցութիւններու, մերթ դրկից ժողովուրդներէն, մերթ՝ մեր երկիրը ներխուժածներէն, մերթ ալ՝ երբ ապրած ենք ուրիշ երկիրներ, տարբեր ժողովուրդներու գիրկին մէջ:

Հիմա եկած ենք Հայաստան ու մեր շուրջը դիտելով՝ շատ մը խորթ բաներու կը հանդիպինք ու կը քննադատենք, մասնաւորաբար օտարամուտ բառերն ու սովեսական կենցաղէն ժառանգուած բարքերը:

Չենք անդրադառնար, որ այս մարդիկը ամբողջ 70 տարի սովեսական իշխանութեան մականին տակ ապրեցան, իմա՝ ռուսակա՛ն, եւ ոչ միայն ազդուեցան, այլեւ ակամայ ռուսականացման գործընթացին ենթարկուելով՝ շատ մը խորթութիւններ կրեցին: Հարցը հասկնալի է, սակայն ինչ որ անհասկնալի է՝ այդ ազդեցութիւններէն լրիւ չձերբազատուիլն է անկախութեան անցնող քառորդ դարու ընթացքին:

Ճիշդ է որ հայերէնը պետական միակ լեզուն ընդունուեցաւ եւ կարգ մը ժառանգուած երեւոյթներ չքացան, ինչպէս պետական պաշտօնական որակումները (պրեզիտենտ-նախագահ, մինիստր-նախարար, եւ այլն), տեղանուններու մեծամասնութեան հայկականացումը: Սակայն եօթանասուն տարի կեղեւ կապած բանէ մը հրաժարիլը դիւրին չէ, գիտե՛նք, սակայն անկարելի ալ չէ, տակաւին կան բաներ, որոնք մոռացութեան տրուած են, կամ ալ անոնց կարեւորութիւն չէ տրուած, ինչպէս օրինակ հայերէն տառերու անուանումները:

Մեսրոպ Մաշտոց անուններ տուած է մեր տառերուն՝ Այբ, Բեն, Գիմ...ճիշտ ինչպէս ուրիշ ազգերու տառերն ալ յատուկ անուններով կը կոչուին, «Ալֆա՝ Պեթթա, Կամմա... էյ Պի, Սի,... Ալէֆ, Պա՛ը, Դա՛ը... եւայլն, սակայն մինչեւ այսօր Հայաստանի դպրոցներուն մէջ երեխաներուն մեր տառերը կը սորվեցնեն «Ա, Պը, Կը, Տը-ով (Ա, Բը, Գը, Դը)... Ճիշդ ռուսերէնի հնչիւններուն նման: Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը չի՞ նկատեր այս բացայայտ մեղանչումը մեր արբութեան հանդէպ: Շատ պիտի փափաքէի լսել պաշտօնական կարծիքը տուեալ նախարարութեան: ՀԲԸՄ-ը՝ «Հօ, Բեն, Ըթ, Մէն» է, ոչ թէ «Հը, Պը, Ը, Մը»:

Շատ խօսուեցաւ հայերէն լեզուի անմահրութեան մասին, պաշտօնական յայտարարութեանց ու մամուլի մէջ, կամ ժողովրդային խօսակցական լեզուի պարագային, սակայն ի զուր, ոչ մէկ փոփոխութիւն, ընդհակառակը՝ կարծես յատուկ ջանք կայ հայերէն բառերը պաշտօնազրկելու եւ անոնց փոխարէն օտար բառեր օգտագործելու:

Այո՛, փոխազդեցութիւնները անխուսափելի են, սակայն ոչ այն ասիճանի, որ իսկականը լրիւ աղաւաղուի եւ օտարանայ:

Ազդեցութիւններէն ու փոխազդեցութիւններէն զերծ մնալը հնարաւոր չէ, այլ անոնցմէ վնասակարներուն դէմ չպայքարի՛լն է վնասակարը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Փանոս Թերլեմեզյանի «Կյանքիս հուշերը» գրքի շնորհանդես Գյումրիում

Գյումրի

Այս տարի հիմնադրման 20-ամյակն է նշում Երեւանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղը: Վերջինիս սրահում, որտեղ բացվել էր նաեւ կրթօջախի սաների նկարչական աշխատանքների ցուցահանդեսը, Ռամկավար Ազատական կուսակցության Շիրակի մարզային կառույցի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Փանոս Թերլեմեզյանի «Կյանքիս հուշերը» գրքի շնորհանդեսը: Հիշեցնենք, Թեքեյան մշակութային միության հրատարակած այս հույժ արժեքավոր գրքի շնորհանդեսը մայիս ամսին տեղի էր ունեցել մայրաքաղաքում՝ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում, օգոստոսին՝ Նյու Ջերսիում, Բոստոնում եւ Լոս Անջելեսում, բայց կազմակերպիչները ցանկացել էին այն ներկայացնել նաեւ Գյումրիի արվեստասերներին ու ոլորտի ուսանող երիտասարդներին:

«Մեր կորսված հայրենիքն ու մեր կորսված հայրենիքի կյանքի ժամանակը մնացին գրքերում եւ զանազան գրվածքներում: 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայկական կյանքի պատկերը այսօր էլ մնում է թերի ու անկատար: Եվ անավարտ, որովհետեւ անկատար եղավ ինքը՝ կյանքը, դաժանորեն ընդհատված ու սպանված...»,- գրում է «Հուշերի» բնագիրը հրատարակության պատրաստած, առաջաբանի եւ ծանոթագրությունների հեղինակ **Երվանդ Տեր-Խաչատուրյանը**: Այդ «կյանքի ժամանակն» ապրած մանավանդ մեծ անհատների այսպիսի գրությունները մեզ մտովի կրկին ու կրկին վերադարձնում են այնտեղ, վերստեղծում մեր առայժմ կորուսյալ հայրենիքի ու նրա երբեմնի բարգավաճ կյանքի բազմակողմանի պատկերը, տալիս այն ճանաչելու եւ կատարվածը վերլուծելու, իմաստավորելու հարուստ նյութ: Ինչպես Գյումրու շնորհանդեսի ժամանակ նկատեց արվեստաբան **Արքմս Մարգարյանը**, ավելի քան 75-ամյա լռությունից կյանքի կոչված այս հուշերն ունեն նաեւ գրականագիտական արժեք, նաեւ ազգագրական արժեք, նաեւ կարեւոր են քաղաքական բացահայտումների տեսակետից:

Շնորհանդեսին այս հրատարակության կարեւորության ու գրքի արժանիքների մասին խոսեցին նաեւ Շիրակի մարզպետ **Արթուր Խաչատրյանը**, ՌԱԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատու **Հովիկ Կարապետյանը**, ԵՊՀ դասախոս, արվեստաբան, գրականագետ, հուշերի գիրքը կազմող **Երվանդ Տեր-Խաչատուրյանը**:

Ռուսքավելու փողոցի հիմնանորոգված հատվածը ուշագրավ նորություն է Գյումրիում

Վարչապետը խոսքն արագ գործ դարձնելու առաջին գեղեցիկ օրինակը տվեց

Այսքան տարիների ընթացքում Հայաստանի փոփոխվող կառավարություններից ոչ մեկն այդպես էլ չփորձեց տալ այն հարցի պատասխանը, թե երկրաշարժից հետո լավ թե վատ վերականգնվող Գյումրին ի վերջո ի՞նչ քաղաք է լինելու, հատկապես ի՞նչ ուղղությամբ կամ ուղղություններով է զարգանալու եւ ի վերջո իր բնականոն կենսագործունեությունը ծավալելու: Իհարկե, տարբեր տարիների եղան զանազան ե՛ւ ծրագրեր, ե՛ւ որոշումներ, ե՛ւ անգամ ինչ-ինչ ձեռնարկումներ, բայց դրանց հիմնական մասը կա՛մ խոսակցություններից ու թղթի վրայից այն կողմ չանցան, կա՛մ մնացին կեսճանապարհին, կամ նույնիսկ իրականացվելու դեպքում չպատասխանեցին գլխավոր հարցին եւ էական համարյա ոչինչ չփոխեցին:

Արդյունաբերազրկված քաղաքի ապագայի մշուշոտ տեսլականը թերեւս փոքրինչ փոխելու կարող է ծառայել վարչապետ Կարեն Կարապետյանի նախաձեռնությամբ կամ ղեկավարությամբ հղացված՝ «Կումայրի» պատմական կենտրոնի զարգացման ծրագիրը, որի նպատակն այստեղ զբոսաշրջության խթանումն է: Ավերիչ երկրաշարժից հետո պատկերավոր ասում էին՝ Լենինականը գնաց, Գյումրին մնաց: Գյումրին քաղաքի պատմական միջուկն է՝ «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանի տարածքում ընդգրկված 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի ուրույն ճարտարապետությամբ շինություններով, որոնք հիմնականում դիմացան տարերքի հարվածներին: Ժամանակին մեր սքանչելի մայրաքաղաք Երեւանի պատմական կենտրոնի վայրենաբարո ոչնչացումից հետո հիմա խոսվում է «Հին Երեւան» արհեստական թաղամաս ստեղծելու մասին, ինչը տխուր զավեշտի է նման: Ի տարբերություն մայրաքաղաքի, Գյումրիում այդ պատմական կենտրոնը կա, թեկուզ որոշ կորուստներով, եւ դա շատերը համարում են քաղաքիս հիմնական գրավչություններից մեկը, զբոսաշրջության զարգացման չօգտագործված հնարավորություն: Անցյալ տարվա դեկտեմբերին այստեղ եկած դեռ նոր վարչապետը շրջեց, նայեց եւ ասաց՝ ֆանտաստիկ է... Ծրագիր մշակվեց, նախատեսվեց հիմնանորոգել Ռուսքավելու եւ Շիրազի փողոցներն իրենց ողջ պատմական կոլորիտով, ստեղծել զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ: «Այս ծրագիրը տրամադրություն փոխող ծրագիր է»,- կայացած շնորհանդեսի ժամանակ ասաց **Կ. Կարապետյանը**: Արդեն այս տարվա մարտ ամսին Ռուսքավելու փողոցում շինաշխատանքները սկսվեցին...

Ավելի ճիշտ՝ նախ սկսվեցին քանդման աշխատանքները: Փողոցի նորոգումը հիմնավոր կատարելու համար հանվեց այն ծածկող սալահատակը, հողային հիմքը խոր փորվեց, փոխվեցին, նորացվեցին փողոցի տակով անցնող գազատար, ջրատար խողովակները, էլեկտրագծերը եւ այլն, անցկացվեց կոյուղատար եւ ջրահեռացման համակարգ, ու միայն այդքանը կրկին հողով ծածկելուց հետո սկսվեց ճանապարհի պատատառի ու մայթերի կառուցումը, ձեւավորումը:

Ռուսքավելու փողոցի օրեր առաջ հանդիսավոր բացված, իրոք հիմնավոր նորոգված հատվածը՝ Շիրակացու փողոցից մինչեւ Սայաթ-Նովայի փողոց, մոտ 9000 քառակուսի մետր ընդհանուր տարածքով, Գյումրու պատմական կոլորիտի ու փողոցաշինության ներկա պահանջների համադրության լավ օրինակ է թվում: Փողոցի հատուկ նեղացված երթեւեկելի մասը սալապատվել է գրանիտե նոր չորսվասալներով, մայթերը՝ բազալտե սալերով ու գրանիտե եզրաքարերով, անցկացվել է ճաշակով ձեւավորված լուսավորության համակարգ, տեղադրվել են նստարաններ, ծաղկամաններ: Առաջին հայացքից՝ պակասում է ծառապատումը, որն էլ գուցե պայմանավորված է այս կարգի փողոցի բնույթով, չգիտենք: Բոլոր դեպքերում ստեղծված է հետաքրքրություն առաջացնող բավական հաճելի միջավայր: Իսկ քաղաքի կենտրոնական հրապարակում ստեղծվել է նաեւ եկող հյուրերի, զբոսաշրջիկների սպասարկման տեղեկատվական կենտրոն:

Պատասխանատուների հավաստմամբ՝ գալիք գարնանը շինաշխատանքները կսկսվեն նաեւ Շիրազի փողոցում, կիրականացվեն այդ երկու փողոցների համար նախատեսված այլեւայլ ծրագրեր:

...Գյումրեցիների վերաբերմունքը, գնահատականները կարող են տարբեր լինել: Ֆեյսբուք սոցիալական ցանցի տեղացի օգտատերերից մեկն, օրինակ, հռետորական հարց էր տվել. «Այս փողոցը դեպի ո՞ր գործարան է տանում»: Բայց այդ բոլորով հանդերձ թերեւս համաձայնենք, որ կատարված թեկուզ մեկ իրական քայլը բոլոր տեսակի սին խոսքերից ու ծրագրերից լավ է:

Ու մի բան էլ տեսանք այս օրինակով: Եթե իշխանությունը մի բան իսկապես ցանկանում է, հաճախ նաեւ կարող է անել: Ու այդ ժամանակ փող էլ կգտնվի, կատարողներ էլ:

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 3

Տնտեսական ակտիվության աճի տեմպը նվազել է

Այն մեծապես պայմանավորված է արդյունաբերության ցուցանիշներով

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2017-ի հունվար-սեպտեմբերին Հայաստանի տնտեսական ակտիվությունն աճել է 5,1 տոկոսով: Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տեղեկատվությունից պարզ է դառնում, որ աճի տեմպը նվազել է: Երկու ամիս առաջ, հունվար-հուլիս ամսվա տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության աճը 6,2 տոկոս էր: Տարեսկզբից տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպ էր գրանցվում, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի դարձյալ բարձր ցուցանիշների նկատմամբ: Եթե նկատի ունենանք, որ կառավարության ներկայացուցիչների կողմից տարեկան 4,5-5 տոկոս տնտեսական աճն են իրական համարում, ապա 5,1 տոկոսը այս տրամաբանության մեջ տեղավորվում է, բայց եթե նկատի ունենանք, որ աճի տեմպը նվազել է, ապա դա մտահոգություններ է առաջացնում:

Մտահոգիչ է առաջին հերթին տնտեսության կարեւորագույն ճյուղում՝ արդյունաբերության մեջ արձանագրված աճի տեմպի որոշ նվազումը: Եթե 7 ամիսների արդյունքով արդյունաբերության ծավալներն աճել էին 12,7 տոկոսով, ապա 9 ամիսների ցուցանիշով՝ 11,9 տոկոսով: Միաժամանակ, արդյունաբերությունը շարունակել է մնալ այն երեք ճյուղերից մեկը, որոնց շնորհիվ Հայաստանի տնտեսությունն աճ է արձանագրում: Չափազանց կարեւոր է, որ հենց այս ճյուղի աճի տեմպը կրկին բարձրանա կամ առնվազն պահպանվի այս մակարդակի վրա, որովհետեւ առաջին հերթին արդյունաբերական զարգացման միջոցով է հնարավոր տնտեսության ընդհանուր ու որակյալ աճը եւ կենսամակարդակի իրական բարձրացումը: Արդյունաբերությունում աճի տեմպի նվազումը համանման անդրադարձ է ունեցել նաեւ արտահանման աճի տեմպի վրա: 9 ամիսների արդյունքում Հայաստանից արտահանումը աճել է 19,1 տոկոսով, որն, իհարկե լավ ցուցանիշ է, բայց այստեղ եւս 7 ամիսների արդյունքով աճը 21,6 տոկոս էր:

Տնտեսության մյուս ճյուղերից առեւտրի շրջանառությունն ավելացել է՝ 12,5 տոկոսով, ծառայություններինը՝ 12,8 տոկոսով: Այս ճյուղերում աճի տեմպն ավելացել է: Եթե առեւտրի դեպքում դա վկայում է միայն տնտեսության մյուս ճյուղերի աճի եւ արտերկրից մասնավոր փոխանցումների ավելացման մասին եւ տնտեսական կացության վրա առանձնապես դրական ազդեցություն չի թողնում, ապա ծառայությունների, մասնավորապես զբոսաշրջությանն առնչվողների աճի տեմպի ավելացումը որոշակի դրական արդյունք տալիս է: Մասնավորապես, շուրջ 20-25 տոկոսով Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվի ավելացումը հավելյալ արտարժութային ներհոսք է բերել եւ աջակցել այս ճյուղում գործող ընկերությունների գործունեության աճխուժացմանն ու զարգացմանը:

Տնտեսության մյուս երկու ճյուղերում, ցավոք, տնտեսական անկում է արձանագրվել: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է 9,9 տոկոսով, շինարարության ծավալը՝ 6,4 տոկոսով:

Գյուղատնտեսության համախառն ծավալների անկումը կառավարության համար երկրորդ լուրջ մտահոգություն պետք է լինի արդյունաբերության աճի տեմպի նվազումից հետո: Թերեւս գյուղատնտեսության նկատմամբ պետական աջակցության ծրագրերը ընդլայնելու եւ ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ հավելյալ քայլեր կատարելու կարիք կա:

Ինչ վերաբերում է շինարարությանը, ապա այստեղ ծավալները յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա համեմատ աճում են, բայց անցյալ տարվա 9 ամիսների ընդհանրական ծավալի համեմատ անկում են արձանագրում: Նախատեսված ներդրումային ծրագրերի իրագործման դեպքում գուցե վերջապես այս ճյուղը դուրս գա տարիներ շարունակվող անկումից:

Ելնելով այս ցուցանիշներից եւ միտումներից, կարելի է ենթադրել, որ տնտեսական աճի ներկայիս տեմպը էապես չի փոխվի: Դրական է, որ մեծամասամբ հենց արդյունաբերությամբ է պայմանավորվում տնտեսական աճի ցուցանիշը՝ այս ճյուղը ծավալներով երկրորդն է առեւտրից հետո: Սակայն այս պարագայում արդյունաբերական ծավալների նվազումն էլ անմիջականորեն անդրադառնալու է տնտեսական աճի ընդհանուր ցուցանիշի վրա: Հետեւաբար, այս ճյուղի զարգացումը պետք է համարվի գերակայություն՝ այդ բառի լայն եւ ամբողջական իմաստով:

Քողազերծումներ պաշտպանության նախարարից

⇨1 Տարկետում տրվում է, փաստորեն, միայն առողջական վիճակից կամ ընտանեկան պայմաններից ելնելով, նաեւ՝ նպատակային ուսումնառության համար, իսկ ահա ուսանողներին տարկետում տրվում է, եթե նրանք ՊՆ-ի հետ կնքում են վերը նշված քաղաքացիաիրավական պայմանագիր՝ ուսումնառությունից հետո զինվորական ծառայություն անցնելու ՊՆ նշած վայրում եւ պայմաններով:

Այս օրենքով սոցիալական երաշխիքներ կան սպայական կազմի համար՝ սկսած աշխատավարձին համապատասխան կենսաթոշակներից մինչեւ անտոկոս կամ անկանխավճար տրամադրմամբ (դրանք փոխհատուցում է ՊՆ-ն) հիպոթեքային բնակարաններ: Ըստ նախարարի՝ հաշվարկն այնպիսին է , որ քսան տարվա ընթացքում պայմանագրային զինծառայողը, օգտվելով մաքսելի հիպոթեքային ծրագրից, մարելու է մայր գումարի 90 տոկոսը, իսկ արդեն ծառայության երրորդ-չորրորդ տարում սպան կարող է այս ծրագրով բնակարան ունենալ:

Փորձ է արվել փոփոխել նաեւ առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության կարգերը՝ հիվանդությունների ցանկը ՊՆ-ի փոխարեն կառավարությունն սահմանելու, փորձաքննության պատասխանատվությունը վերահանձնվելու է տարածքային պոլիկլինիկաներին, այդպիսով՝ համապատասխան հաճնաժողովին կամ ժողովրդի աչքում կոռուպցիայի այս օջակին չեզոքացնելով: Իսկ թե ինչ կստացվի դրանից՝ դա դեռ գործնականում պետք է կյանքի ուղղեգիր ստանա եւ հետո առարկայանա:

Իհարկե, բոլոր այս փոփոխությունները արվում են նրա համար, որ ի վերջո գրավիչ դարձնեն հայոց բանակում ծառայությունը, իսկ որ ավելի կարեւոր է՝զորակոչման, տարկետումների տրամադրման, բանակից ազատման հարցերում արդարություն հաստատվի, այդպիսով նաեւ նվազեցնելով կոռուպցիան բանակում եւ մերձբանակային սպասարկման բոլոր մակարդակներում: Նախագիծը ներկայացնող ՊՆ նախարարը հավաստած է, որ այս օրենսդրական փոփոխություններով հնարավոր կլինի գոնե գլոբալ բարեփոխումների անցումն ապահովել: Եւ խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչների ելույթներում նույնպես տարբեր մոտեցումներով առկա էր փոփոխություններին սաստար կանգնելու մոտիվը:

Փոփոխությունների ոգուն կողմ, բայց նախաձեռնությանը հավաս չընծայող ընդդիմախոսները (Մանե Թանդիլյանը, Նիկոլ Փաշինյանը, Էդմոն Մարությանը, Գեւորգ Գորգիսյանը,Նաիրա Զոհրաբյանը եւ այլք) չէին հավատում, որ այս օրենսդրությամբ հնարավոր է արդարություն հաստատել զորակոչման պրակտիկայում, եւ միայն սոցիալական անապահով խավին բաժին չհանել հայոց սահմանների պաշտպանությունը, ինչպես նաեւ բանակում վերացնել այժմ առկա լայնածավալ կոռուպցիան: **Ն. Փաշինյանը** մի վիճակագրություն բերեց, որով տարկետումների առյուծի բաժինը ոչ թե ուսումը շարունակելու պատրվակով ծառայությունից ազատման հիմքով է, այլ առողջական պատրվակների, եւ դա հատկապես լայնորեն օգտագործել են պաշտոնյաների զավակները՝ ծառայությունից ազատվելով: Նրա կարծիքով այս հնարավորությունը օրենքի ընդունումից հետո եւս մնալու է, այս իմաստով անհասկանալի է բանակը բակալավրերից, այսինքն՝ տարբեր մասնագիտությունների մարդկանցից զրկելու հեռանկարը:

Ըստ Վիգեն Սարգսյանի՝ ուսանողներին տարկետման իրավունքից զրկելը եւ բանակ տանելը խանգարիչ հանգամանք չի կարող լինել այն ուսանողների համար, որոնք հաստատ որոշել են գիտությամբ զբաղվել, նրանք դա կանեն բանակից վերադառնալուց հետո: Իսկ օրենքում առկա՝ պայմանագրային ծառայության նոր կարգը, հակառակը, թույլ կտա բանակը համալրել տարբեր մասնագետներով:

Հիշեցնենք, որ ուսման նպատակով տարկետման իրավունքը վերացնելու խնդիրը տարբեր պարբերականությամբ հաճախ փորձել են լուծել պաշտպանության նախարարները, Վազգեն Սարգսյանը ներառյալ, ու դա մի քանի անգամ արժանացել է խորհրդարանականների կասեցնող դիմադրությանը, որոնցից շատերի ականատեսը եղել է տողերիս հեղինակը, ընդհուպ Ազգային ժողովի նախագահի հրաժարական:

Այս դեպքում, սակայն, կասեցնողներ չկային, եղած փոքրաթիվ ընդդիմախոսներն էլ արժանացան պաշտպանության նախարարի անսպասելի ու խիստ անձնավորված հակահարվածին:

Ուրիշ բան, որ, հա, մեր երկրի շուրջ ձեւավորված ռազմաքաղաքական վիճակը զգոնացնում եւ պահանջում է մոտեցումների խստացում, կամ ինչպես հարակից զեկուցող **Կորյուն Նահապետյանն** էր ասում՝ համակարգային փոփոխություններ, սակայն այդ փոփոխությունները զուտ օրենսդրական նոր իրավահարաբերությունների սանդղակի ձեւավորմամբ միայն չեն ստացվի, եւ գործնականում, ինչպես **Մանե Թանդիլյանն** էր ձեւակերպել՝ չեն վերացնի բանակում «զոն նայողների» կաստան կամ սոցիալական անարդարությունը՝ գնացուցակն է փոխվելու ընդամենը, ինչպես որ բանակից ազատվելու գները ժամանակին յոթ հազար դոլարից հասան տասնհինգ հազարի:

Իսկ տարկետման իրավունքի վերացումը փողատերերի ու պաշտոնյաների զավակներին բանակից ազատելու գործընթացը լիովին եւ բացարձակապես տեղափոխելու է առողջապահական համակարգ:

Ճիշտն ասած՝ մեզ խիստ զարմացրեց Վիգեն Սարգսյանի նյարդային արձագանքը փոքրաթիվ ընդդիմության ընդդիմախոսությանն օրենքի նախագծին՝նրա ներկայացուցիչների քողազերծման տեսքով: Պարզ է, որ Վ. Սարգսյանի նախորդ աշխատատեղերը թույլ էին տալիս , որ նա տիրապետի դույզն-ինչ դերակատար քաղաքական ուժերից յուրաքանչյուրի անդամների մասին լիարժեք, այդ թվում անձնական տեղեկատվության, դա հավասարապես վերաբերում է եւ իշխանական, եւ ընդդիմադիր շրջանակներին: Սակայն այդ տեղեկատվությունից օգտվելը՝ ընդդիմախոսներին ոչնչացնելու համար, պիտի որ լավ տոնի նշան չհամարվի, մանավանդ, որ նա դա ընտրվի արեց՝ մոռանալով «գլխավոր» ընդդիմախոսին: Նա մատնանշեց «Ելք» դաշինքի անդամներից Էդմոն Մարուքյանի՝ նույն ժամանակահատվածում եւ սովորելու, եւ ծառայելու զարմանալի փաստը, Արարատ Միրզոյանի՝ մեկ օր անգամ չծառայելով ՊՆ-ից պատվոգիր ստանալու պարագան: Իսկ «Ելքի» ղեկավար Նիկոլ Փաշինյանին, ով գլխավոր կոռուպցիան ոչ թե գիտությամբ զբաղվելու ասպիրանտական պարագան էր համարում, այլ առողջական կեղծ խնդիրներով բանակից ազատումը, եւ նշում էր բանակում չծառայելու համար երկրից բացակա հազարից ավելի հետախուզվողներին, հակադարձեց. «Ձեր նշած հետախուզվողների զգալի մասն այն անձինք են , որոնց քսանյոթ տարին առաջիկայում լրանալու է: Նրանք սպասում են, որ տարիքը լրանա եւ մեր կողմից ընդունված օրենքի ուժով բերեն-թուլափայ գցեն բանակին՝ համարելով, որ իրենք իրենց սահմանադրական պարտքը կատարել են, ինչպես առաջնագծում ծառայած երիտասարդներ: Ընկել եք հոգեւոր ճեմարանում ծառայող տասնութ հոգու հետեւից, կարծես մեր Առաքելական եկեղեցուց առավել առաջամարտիկ է եղել մեր ազգային ինքնության պահպանման եւ սահմանների անձեռնմխելիության համար»:

Մի կողմից լավ է այս քողազերումը, ով չգիտի՝ կիմանա ում հետ գործ ունի, մյուս կողմից՝ հենց Ազգային ժողովի դահլիճը գոնե չորեքշաբթի օրերին լի է մեծամասնությամբ չծառայած պատգամավորներով ու նախարարփոխնախարարներով. ո՛ր մեկի կենսագրությունն ուսումնասիրում ես՝ տարկետման իրավունքից է օգտվել, բա սա ո՞վ ասի, եթե ոչ չծառայած ընդդիմադիրները:

Բացի այդ՝ ընդդիմադիր եք կերտել, որ քողազերծե՞ք, դիմացեք:

Եւ բացի այդ՝ գործընթացներին հետեւող մեր իրազեկ հայացքով՝ տարկետման իրավունքի այս խստացման դեմ բողոքը դեռ թափ է հավաքելու, քանի որ մեր կարծիքով էլ դա ամենալավ որոշումը չէ եւ նվեր է իշխանության համար պայքարի պատրաստվող զանազան շրջանակների, այն էլ՝ այս պահին:

Ի դեմ՝ այս քննարկումներից հետո խորհրդարանը հանգիստ ու անվրդով անցավ Հայաստանում պարտադիր սպանդանոցային մոթ կազմակերպելու իրավական հիմքերի ապահովման օրենսդրական փոփոխություններին:

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 4

Հայաստանի երկընտրանքներն ու հնարավորությունները

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Պետրոյթ, ԱՄՆ

Հայաստանը դարձյալ հայտնվել է արեւելք-արեւմուտք պատերազմի թոհուբոհում: 2013-ին, Եվրոմիության հետ երկար բանակցություններից հետո, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանկարծակի ընդհատեց երկխոսությունը այդ կառույցի հետ եւ կտրուկ շրջադարձ կատարելով համաձայնագիր ստորագրեց Մոսկվայի ղեկավարությամբ ստեղծված եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ:

Մինչ օրս, պաշտոնական ոչ մի բացատրություն չի տրվել, թե ինչու նախագահը անձնական որոշմամբ ընտրեց երկիրն առաջնորդել բոլորովին այլ ուղղությամբ: Բայց պատճառներն ակնհայտ են: Մոսկվան ճնշում էր գործադրել:

Եվրոմիությունը որեւէ հակընդդեմ գործողություն չծավալեց: Փոխարենը՝ շարունակեց աջակցել Հայաստանին եւ շարունակեց նրան ու ռուսական ազդեցության տակ գտնվող մյուս երկրներին սիրաշահելու իր ջանքերը: Մոսկվան, տարված իր տարածաշրջանային եւ գլոբալ շահերով, անհրաժեշտություն չտեսավ հոգալու Հայաստանի տնտեսական կարիքները, բաց թողնելով դուռը Հայաստանի առաջ, որ շարունակի գործակցել արեւմուտքի հետ:

«Eurasia.net» բլոգը կասկածները փարատելու համար նշում է, որ ռուսական լրատվամիջոցները ձայնակցում են Կրեմլի ջանքերին: Պետական ֆինանսավորմամբ գործող «Sputnik» լրատվական ծառայությունը անցյալ շաբաթ Եվրասիական տնտեսական միությունը բնութագրել էր որպես հնարավորություն Հայաստանի համար՝ վերականգնելու խորհրդային ժամանակաշրջանի բարգավաճ վիճակը:

Նման նախաձեռնությունը հնչում է արեւմուտքի հետ Հայաստանի մերձեցման ջանքերի նախօրեին: Նախագահ Սարգսյանը նոյեմբերին մասնակցելու է Բրյուսելում կայանալիք Եվրոմիության գագաթաժողովին, որին ներկա են գտնվելու նաեւ Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան եւ Ուկրաինան:

Սա Ռուսաստանին մեկուսացնելու արեւմտքի համապարփակ ծրագրի մի մասն է: Մոսկվան, զիջողականություն դրսեւորելով, կարող է չպատժի Հայաստանին, որը միակը չէ, որ դեպի արեւմուտք է թեքվում:

Հայաստանի խորհրդարանում Եվրասիական տնտեսական միությունից երկիրը դուրս բերելու մի բանաձեւ ձախողության մատնվեց հենց սկզբից, հավանաբար Ռուսաստանի կողմից պատժամիջոցների կիրառման վախից դրդված:

Այս անգամվա Հայաստանի մերձեցումը Եվրոմիությանը իր մեջ կոմպրոմիսային մի կետ է ներառում, որը կարող է վանել ռուսական կողմի մտահոգությունները, միաժամանակ Հայաստանին ընձեռելով երկու կողմերի միջեւ նշանակալի դերակատարություն ունենալու հնարավորությունը: Այն ներառում է քաղաքական բարեփոխումների սկզբնական ձեւակերպումները, որոնք երաշխավորում են, որ Եվրոմիությունն ու Հայաստանը միեւնույն ժողովրդավարական արժեքներն են դավանում: Հատուկ մի պարբերություն թույլ է տալիս Հայաստանին համագործակցել Եվրոմիության հետ՝ պահպանելով հանդերձ Եվրասիական տնտեսական միության կանոններին հավատարիմ մնալու խոստումը:

Այսպիսով, Ռուսաստանը թուլացրել է սանձերը Հայաստանի նկատմամբ՝ հավատ ընծայելով, որ վերջինս շատ հեռու չի գնա: Հայաստանի զգուշավոր հաստատակամությունն, իր հերթին, այլ դիվիդենտներ էլ է տվել. Մոսկվան հավելյալ 100 միլիոն դոլար է վարկ տվել գնելու արդիական զինտեխնիկա:

Բացի եվրասիական միությունից, Հայաստանը Ռուսաստանի գործընկերն է նաեւ ՀԱՊԿ-ում, որտեղ հատկապես երկու անդամներ՝ Բելառուսն ու Ղազախստանը անպատիժ ոտնահարում են Հայաստանի շահերը: Հայաստանի փոխխոսնակ **Էդուարդ Շարմազանովը** վերջապես կոչտացնելով դիրքորոշումը հանդիմանեց իր բելառուս գործընկերոջը՝ Բոլեսլավ Պիրշտուկին՝ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովում ասելով, որ ՀԱՊԿ անդամ պետությունները պետք է միջազգային հարթակներում պաշտպանեն միմյանց, եւ ոչ թե հանդես գան հայտարարություններով, որոնք չեն բխում ՀԱՊԿ-ի պաշտոնական դիրքորոշումից:

Մինչ Ռուսաստանը թույլ չի տալու, որ իր ռազմավարական դաշնակիցները շատ հեռու գնան, նա նաեւ միաժամանակ փորձելու է հմայել մեկ այլ նախկին խորհրդային հանրապետության՝ Ադրբեջանին միանալու ԵԱՏՄ-ին, որպես արդեն տարածաշրջանային մարտավարություն. վերջերս այն հարցին, թե հնարավո՞ր է արդյոք, որ Ադրբեջանը միանա ԵԱՏՄ-ին, նախագահ Պուտինի եվրասիական հարցերով խորհրդական **Սերգեյ Գլազիեւը** նշեց, որ Ադրբեջանի անդամակցության հարցը պետք է որոշեն բոլոր անդամները, «բայց տվյալ դեպքում Հայաստանի որոշումը վճռական կարող է լինել, քանի որ նա կարող է օգտագործել իր վետոյի իրավունքը»:

Մոսկվան հավատացած է, որ ԵԱՏՄ-ին Ադրբեջանի անդամակցությունը նպաստելու է տարածաշրջանային կայունությանը եւ տնտեսական առաջընթացին: Իհարկե, Հայաստանն օգտվելու է տարածաշրջանի այդ տնտեսական առաջընթացից, բայց հանուն ինչի՞ նա պետք է հրաժարվի վետոյի իր իրավունքից: Այդուհանդերձ այդ կառույցում Ադրբեջանին ներգրավելու Մոսկվայի ձգտումը դրական արձագանք գտավ Հայաստանի խորհրդարանում, երբ իշխող Հանրապետական կուսակցության անդամները նշեցին, որ ԵԱՏՄ-ին Ադրբեջանի անդամակցությունը «կնվազեցնի թշնամանքի վերսկսման հնարավորությունը»:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը վաղուց արդեն հույսը կորցրել է, որ ԵԱՀԿ-ը կարող է կարգավորել ղարաբաղյան հակամարտությունը եւ դրանով հնարավորություն կունենա անդամակցելու Եվրոմիությանը: Բայց կարծես Բաքուն չի էլ շտապում այդ հարցում: Հոկտեմբերի 16-ին Ժնեւում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը շատ արդյունավետ չէր: Երկու երկրների արտգործնախարարների համատեղ հաղորդագրությունը նշում էր, որ «հանդիպումը տեղի ունեցավ կառուցողական մթնոլորտում: Համանախագահներն իրենց գոհունակությունը արտահայտեցին երկար ընդմիջումից հետո այս անմիջական երկխոսության առթիվ: ...Որպես հաջորդ քայլ, համանախագահները աշխատանքային հանդիպումներ են կազմակերպելու նախարարների հետ մոտ ապագայում»:

Միայն նախագահ **Սերժ Սարգսյանը** հակիրճ եւ զգուշավոր արտահայտություն արեց, մինչ ադրբեջանական կողմը լուռ մնաց: Նրա մարտավարությունը Հայաստանին թուլացնելն է եւ սպասել, որ երկիրը պարպվի իր բնակչությունից:

Հայաստանի վճռական կեցվածքին նպաստում է Չինաստանի գործոնը: Չինաստանը շատ առատաձեռն է եղել Հայաստանի հանդեպ, չնայած վերջինիս փոխրությանը: Այդ առատաձեռնությունը կարող է շատերի զարմանքն առաջացնել, բայց Չինաստանի գլոբալ փառասիրությունների պրիզմայով դիտարկելիս նման հարաբերությունների հարցը շատ ավելի տրամաբանական է թվում:

Միայն արեւմուտքը չէ, որ Ռուսաստանին պարփակելու քաղաքականություն է վարում: Չինաստանը հավասարապես մտահոգ է Ռուսաստանի հետագա քայլերի առնչությամբ, չնայած ներկայիս երկու պետությունները համահունչ են գործում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստերում: Պեկինը տնտեսական զարգացման շատ հանդուգն ու գլոբալ ծրագիր է մշակում, նպատակ ունենալով վերականգնել նախկին «Մետաքսի Ճանապարհը», որտեղ նի այդ նույն տարածքների հանդեպ: Թուրքիայի պան-թյուրքական ծրագրերը ներառում են ղուրանը, մադրասաները, իսլամական ծայրահեղությունը եւ լեզվական միասնությունը, որոնք հակասում են Չինաստանի տնտեսական զարգացմանն ուղղված ջանքերին եւ անպայմանորեն բախվելու են միմյանց: Դրանից օգտվողը Հայաստանն է լինելու:

Թուրքիան Չինաստանին վրդովեցնում է նաեւ Ույղուր բնակչության շրջանում էթնիկական խլրտումները վառ պահելու իր նկրտումներով: Նախագահ **Էրդողանը** Չինաստանի ղեկավարներին մեղադրել է Ույղուրների դեմ «ցեղասպանություն» գործելու համար:

Այսպիսով Արեւմուտք-Ռուսաստան տնտեսական եւ ռազմական մրցակցությունն ու Չինաստանի վերհառնումը որպես մեր օրերի գերհզոր պետություն բախվում են միմյանց կովկասյան տարածաշրջանում՝ թույլ տալով Հայաստանին խուսանավելու իր արտքին քաղաքականության բնագավառում:

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

(The Armenian Mirror-Spectator)

Էրդողանի հարձակումները ավելի ճանաչելի դարձրին թուրք գրողին



Դողան Ակհանլին

Բրյուսելյան «EUobserver-ին» տված հարցազրույցի ընթացքում Գերմանիայի քաղաքացի, թուրք այլախոհ գրող **Դողան Ակհանլին** նշել է, որ Էրդողանի հարձակումները էլ ավելի մեծ ճանաչում են բերել իրեն: Վաթսունամյա գրողը ներկայիս գտնվում է Մադրիդում, այն բանից հետո, երբ Իսպանիայի ոստիկանությունը Ինտերպոլին ներկայացված Թուրքիայի հայտի հիման վրա ձերբակալեց նրան: Նա եկել էր Իսպանիա հանգստանալու: Թուրքիան Իսպանիայից պահանջում է արտահանձնել Դողանին՝ նրան համարելով «ահաբեկիչ»:

Ակհանլին, գրում է **Էնդրու Ռեսմանը**, ծնվել է Թուրքիայում, բայց 1991-ին Գերմանիա է փախչել խուսափելու համար հետապնդումներից: Նրան հալածում էին Հայոց ցեղասպնության եւ քրդերի հանդեպ կիրառվող ճնշումների վերաբերյալ ունեցած իր դիրքորոշման համար:

«Թուրքական իշխանությունները չեն կարողանում հանդուրժել այն, որ ես Թուրքիայի խնդիրներն եմ վեր հանում», նշել է նա կայքի լրագրողին, ավելացնելով, որ իր գրքերն այնքան մեծ ճանաչում չէին բերել իրեն, որքան այդ հալածանքները: Նա շնորհակալություն է հայտնել հատկապես երկու կառույցների՝ Գյոթեի անվան ինստիտուտին եւ PEN գրողների միջազգային ընկերակցությանը հոգալու համար իր ֆինանսական կարիքները Մադրիդում, որտեղ ամեն երկուշաբթի իշխանություններին պետք է ներկայանա ապացուցելու համար, որ Մադրիդում է:

«Բռնությունը Թուրքիայում պասիվ չէ: Այն սպանում է մարդկանց մեր աչքերի առաջ: Ազգայնականությունը վտանգավոր մթնոլորտ է ստեղծել: Բայց Էրդողանը չի կարող շարունակել կառավարել Թուրքիան հենվելով միայն գյուղական բնակչության վրա: Եվրոմիության երկրները պետք է ավելի ակտիվորեն պաշտպանեն աշխարհիկ եւ ժողովրդավարական ուժերին», եզրակացրել է նա: Հ. Ծ.

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 5

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Լոլիկ, վարունգ եւ ադահով Հայաստան

Հանրապետության նախագահը երկուշաբթի մասնակցեց ոստիկանության կոլեգիայի ընդլայնված նիստին: Սերժ Սարգսյանը բավականին երկար ելույթ ունեցավ եւ ափսոս, որ այդ ընթացքում հեռուստաէկրաններից երեւում էր միայն նախագահը, կամ ոստիկանապետը (որը բեմում էր նստած), եւ կամ ոստիկանների առաջին, այլ ոչ թե վերջին շարքերը, քանի որ շատ հետաքրքրական կլիներ տեսնել, թե ինչպե՞ս են ոստիկանության վերջին շարքերում արձագանքում նախագահի ելույթին: Հետաքրքրական եւ շա՛տ կարեւոր. բանն այն է, որ նախագահն իր ելույթի զգալի մասի ընթացքում հենց այդ վերջին շարքերի մասին էր խոսում, օրինակ՝ պետավտոտեսուչներից նրանց, որոնց լկտիությունն արդեն այնքան բարձր մակարդակի է հասել, որ չեն թաքվում անգամ իրենց վրա տեղադրված տեսախցիկներից... Նախագահը հենց այդպես էլ ասաց՝ **պետավտոտեսուչներ, որոնց լկտիության մակարդակը...**

Հեռուստատեսությունում մի կանոն կա. եթե օրինակ լրագրողը կադրից դուրս պատմում է լոլիկի մասին, ապա նոպատակահարմար չէ վարունգ ցույց տալ, եւ ուրեմն երբ նախագահը խոսում է լկտի պետավտոտեսուչներից, նոպատակահարմար է հենց

նրանց ցույց տալ, եթե իհարկե նախագահը ճիշտ է ասում, որ նման պետավտոտեսուչներ համակարգում կան: Ի դեպ, շատ հնարավոր է, որ ճիշտ չի ասում, չի բացառվում, որ բոլորից առաջ հանրապետականները շուտով հակադարձեն Սերժ Սարգսյանին՝ պնդելով, նույնիսկ ապացուցելով, որ ոստիկանության համակարգում լկտի պետավտոտեսուչներ չկան, քանի որ Հայաստանի ոստիկանությունը, Հայաստանն առհասարակ՝ Սերժ Սարգսյանի առաջնորդությամբ վաղուց արդեն երկրում հաստատել է լրիվ օրինականություն եւ հիմա կյանքի գնով պահպանում է այդ օրինականությունը՝ ի նպաստ պետության եւ ի փառս հայ ժողովրդի: Հենց այդպես էլ կասեն, ամեն դեպքում, երբ նախագահի փոխարեն այլ մեկն է պետավտոտեսուչների մեջ կամ ոստիկանության համակարգում առհասարակ նկատում լկտիների, հարձակվում են վրան՝ պնդելով, որ Հայաստանը՝ Սերժ Սարգսյանի առաջնորդությամբ... ի փառս հայ ժողովրդի:

Բայց նախագահը ոստիկանների հետ հանդիպմանը մեկ այլ, շատ ավելի կարեւոր բացահայտում է արել: Պարզվում է, որ մենք հիմա այդքան էլ ադահով Հայաստանում չենք ապրում, դե այսինքն երբ մի քանի տարի առաջ սկսեցինք շարժվել դեպի ադահով Հայաստան, հիմա դեռ չենք հասել, առաջ գնում ենք (ըստ նախագահի), բայց դեռ տեղ չենք հասել (ըստ նախագահի): Ավելի կոնկրետ նախագահն ասել է. **Օրը ցերեկով, շատերի աչքի առջեւ հրազենի գործադրմամբ կատարվում են ծանր հանցագործություններ: Այս երեւույթը մտահոգիչ է նաեւ այն առումով, որ նման դեպքերը չեն պակասում, այլ ավելանալով՝ ստանում են առավել հանդուգն դրսեւորումներ**: Դե սա արդեն խայտառակություն է, պարոնայք. նախագահը, պարզվում է, չգիտի, որ Հայաստանում օրը ցերեկով ոչ ոք հրազեն չի կիրառում, կիրառում են միայն գիշերը, այն էլ սահմանին, այն էլ, եթե կա «կրակ» հրամանը, այլ ցանկացած պարագայում հրազեն Հայաստանում չի կիրառվում, ու այդ մասին, փաստորեն, նախագահը չգիտի: Չգիտի նաեւ, որ արդեն շուրջ տասը տարի է, ինչ ինքը նախագահ է ու երկրում ոչ մի ծանր հանցագործություն չի կատարվել՝ ոչ օրը ցերեկով, ոչ ուշ գիշերին, ոչ աղջամուղջին, մթնշաղին, կամ այգաբացին, երբեք, ոչ մի ժամի: Հետեւաբար չգիտի, որ ծանր հանցագործությունների թիվը Հայաստանում ոչ թե ավելանում է, այլ առհասարակ թվեր չկան, քանի որ մեր ոստիկանությունը, Հայաստանն առհասարակ, Սերժ Սարգսյանի առաջնորդությամբ... ի փառս հայ ժողովրդի:

Իսկ այդ ժողովրդին մնում է հիմա հասկանալ. ո՞րն է խայտառակությունը. այն որ ադահով Հայաստանում օրը ցերեկով, շատերի աչքի առջեւ հրազենի գործադրմամբ կատարվում են ծանր հանցագործություններ, եւ որ այս երեւույթը մտահոգիչ է նաեւ այն առումով, որ նման դեպքերը չեն պակասում, ավելանալում են՝ ստանալով առավել հանդուգն դրսեւորումնե՞ր, թե՞ այն որ նախագահը իրազեկված չէ երկրի անցուդարձից ու չգիտի, որ Հայաստանում վաղուց արդեն ծանր, թեթեւ, միջին հանցագործություններ տեղի չեն ունենում: Սերժ Սարգսյանն ասում է, որ առաջին դեպքն է, ՀՀԿ ակտիվը պնդում է, որ երկրորդ դեպքն է: Իրենք իհարկե չեն ասում, որ նախագահն իրազեկված չէ, բայց նախագահն ասում է այնպիսի բաներ, որոնք նրանք հերքում են, թաքցնում են, ցույց չեն տալիս: Ճիշտ հեռուստաէկրաններց երեւացող ոչ պրոֆեսիոնալ կադրերի պես, երբ լրագրողը խոսում է լոլիկի մասին, իսկ էկրանին երեւում է վարունգ: Ի դեպ, սա եւս խայտառակություն է:

Զուտ անհամբերություն

Անցնող օրերին Ադրբեջանն առաջնագծում երկու անգամ կիրառեց «Սպայկ» համակարգը՝ արկակոծելով մեր դիրքերը: Դիրքերին, փառք Աստծո ոչինչ չի եղել, նրանք ինչպես մնում էին, այդպես էլ մնացել են՝ նույն տեղում, ոչ մի թիզ այս կողմ: Ու չնայած վերջին օրերին զոհեր ունեցանք, բայց դրանցից առնվազն երկուսը հակառակորդի արձակած կրակոցների հետ կապ չունեին. **զենքի հետ անփույթ գործողությունների պատճառով**, չնայած **մեկի մահվան գործում կրստեր սերժանտ է ձերբակալվել, մյուսի պարագայում՝ մայոր**: Ընդհանուր առմամբ՝ անցնող օրերին հակառակորդը մեր դիրքապահների ուղղությամբ արձակել է ավելի քան 2000 կրակոց (բացի «Սպայկի» գործածումից, հրազենային): Արցախի ՊԲ-ից հայտնում են, որ **ՊԲ առաջապահ ստորաբաժանումները շարունակում են իրականացնել առաջնագծի ամբողջական վերահսկողությունը** եւ, ուշադրություն, **առաջնագծում շարունակում են մնալ թելադրողի կարգավիճակում**: Անկեղծ ասած՝ Արցախի ՊԲ-ում նման տեքստեր գրողների փոխարեն ես չէի շեշտի, որ առաջնագծում ՊԲ-ն է մնում թելադրողը, քանի որ ստեղծվում է տպավորություն, որ ՊԲ-ն է թելադրել ադրբեջանցիներին «Սպայկ» կիրառել, օրինակ:

Ինչեւէ, ՊԲ-ից հայտնում են նաեւ, **որ առաջնագծում նկատվող որոշակի լարվածության** եւ, ինչը պակաս ուշագրավ չէ՝ լարվածության նկատվող աճի պայմաններում, **ՊԲ-ն շարունակում է ցուցաբերել զսպվածություն՝ կարեւորելով սահմանին իրավիճակի լարման բացառումը**: Դե այսինքն ադրբեջանցիները կրակում են, մերոնք թելադրում են նրանց խաղաղություն, բայց ադրբեջանցիներն էլի են կրակում, սակայն մերոնք մնում են առաջնագծում թելադրողի կարգավիճակով:

Քաղաքագետ **Լեւոն Շիրինյանը** օրերս հայտարարեց, թե **խաղաղասիրությունը հայ ժողովրդի մոտ դարձել է հոգեկան հիվանդություն, որից պետք է ձերբազատվել**: Ի դեպ՝ քաղաքագետների մասին. նրանցից շատերը (ազգությամբ հայ) նկատում են, որ **ԼՂ բանակցություններում Հայաստանը կարծրացրել է իր դիրքորոշումը**, օրինակ Ժնեւում, Ալիեւը, ըստ հայ քաղաքագետների, խեղճացած տեսք ուներ (այդ երբվանի՞ց է քաղաքագիտությունն ուսումնասիրում այս կամ այն առաջնորդի տեսքը), իսկ այ Սարգսյանը բավականին վստահ էր: Այսինքն բանակցությունների սեղանի շուրջ էլ, ինչպես առաջնագծում, հայկական կողմը թելադրողի կարգավիճակում է: Հնարավոր է, ամեն դեպքում, Ալիեւը Ժնեւում այնքան սարսափելի չէր, որքան նրա մասին խոսում են: Սակայն, ի՞նչ է նշանակում Հայաստանը կարծրացրել է իր դիրքորոշումը: Ասենք ի՞նչ է ասել նախագահ Սարգսյանը, եւ որն ավելի կարեւոր է, ինչի՞ շուրջ են Հայաստանի թելադրանքով պայմանավորվել բանակցող կողմերը: Նախագահ Սարգսյանը, հիշեցնեմ, բանակցությունների ավարտին Ժնեւում տեղակայված մեր դեսպանատանը շվեյցարահայերի հետ հանդիպման ընթացքում ասաց, որ Ալիեւի հետ պայմանավորվել են՝ **թոթափել սահմանին լարվածությունը, որպեսզի այլեւս զոհեր չլինեն**, ու որ Ադրբեջանի նախագահը եւս, իր պես, համաձայն է դրան: Ժնեւից երկու օր անց, հակառակորդի արձակած կրակից զոհվեց հայ զինվոր, հաջորդ օրը Ադրբեջանը հայտնեց ի՛ր զոհի մասին, թեեւ ճիշտ է, որ Արցախի ՊԲ-ն հայտարարեց, թե ինքը Ադրբեջանի զոհի հետ որեւէ կապ չունի: Ստացվում է, որ **մենք երկիր ենք, որին խաբում են**՝ ամենաբարձր մակարդակով, ու որն ավելի ցավալի է՝ **երկիր ենք, որն անպատիժ է թողնում բոլորին, ովքեր իրեն խաբում են, ընդ որում խաբում են** ոչ թե էժան գազ խոստանալով, բայց թանկը տալով, օրինակ, կամ խաբում են ոչ թե ռազմավարական բարեկամություն երդվելով, իրենք էլ վազում ուրիշների մոտ՝ նրանց անվանելով եղբայրներ, այլ խաբում են՝ ասելով, որ չեն կրակելու, ու կրակում են: Ու մենք սա թողնում ենք անպատիժ, քանի որ կարեւորում ենք սահմանին իրավիճակի լարման բացառումը:

Ամեն դեպքում սպասենք Սարգսյան-Ալիեւ հաջորդ հանդիպմանը, մանավանդ որ ՀՀ նախագահը, ինչպես ինքն է ասել անցյալ երեքշաբթի, անհամբեր է սպասում այդ հանդիպմանը, որպեսզի հարցնի Ալիեւին, թե այդ ի՞նչն էր նրան այդքան զայրացրել Ժնեւից հետո: Նախագահը հենց այդպես էլ ասել է՝ **Ես անհամբեր սպասում եմ Իլհամ Ալիեւի հետ մեր հաջորդ հանդիպմանը, որպեսզի պարզեմ, թե այդ ի՞նչն էր նրան այդքան զայրացրել:** Վատն այն է, որ նախագահն այդ հանդիպմանը սպասում է ոչ թե որպեսզի Ալիեւին թելադրի իր իսկ ստանձնած պարտավորությունների կամ խոստումների կատարումը, այլ որ պարզի, թե ինչո՞ւ է զայրացել: Ճիշտ է, նախագահը նաեւ նշել է, որ **կամ կրակում ենք, կամ էլ՝ բանակցում. մենք երկուսին էլ պատրաստ ենք, բայց երկուսը միաժամանակ չի լինում**, բայց կարեւորն այն է, որ ՀՀ նախագահին հետաքրքրում է, թե ինչո՞ւ է զայրացել Ալիեւը: Լավ, ենթադրենք Ալիեւն էլ ասաց, թե ինչու է զայրացել, հետո՞, օրակարգը սպառվելո՞ւ է, էլի պայմանավորվելու են՝ թոթափե՞լ սահմանի լարվածությունը, մի-մի հատ բացօթյա ծխելու են ու միջնորդներին, լրագրողներին ժպտալով միմյանց ցետությո՞ւն են ասելու, թե՞ Սարգսյանը Ալիեւին թելադրելու է մի տեքստ, որի տակ Ալիեւը սիրված ստորագրելու է, այդ տեքստը հրապարակվելու է ու դրանից հետո սահմանին էլ ոչ ոք չի զոհվելու: Լավ, ավելի կարեւոր է պարզել, թե ինչու է Ալիեւը զայրացե՞լ, թե՞ ինչու է Ալիեւը խաբում եւ կամ որքա՞ն է խաբելու:

Եթե Ադրբեջանի նախագահը որոշել է հավերժ խաբել (չնայած՝ ինչո՞ւ եթե), ապա առաջարկում եմ նրա հետ հաջորդ հանդիպմանը պայմանավորվել ոչ թե առաջնագծում լարվածության թոթափման մասին, այլ պատերազմ սկսելու: Հենց այդպես, հանդիպեն Սարգսյանն ու Ալիեւը, օրինակ Վենետիկում (իսկ ինչո՞ւ ոչ), միասին նստեն փոքրիկ գոնդոլը ու հենց դրա մեջ պայմանավորվեն սկսել պատերազմ: Ապա հասնեն ափ ու հայտարարեն, որ «մենք որոշել ենք պատերազմ սկսել», միմյանց ցետություն ասեն, ժպտան ու հեռանան: Ես վստահ եմ, որ միայն այդ դեպքում պատերազմը չի սկսվի նորից... Չնայած ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Ադրբեջանում կան մարդիկ, ովքեր անհամբեր սպասում են, թե երբ պետք է սկսվի պատերազմը, որպեսզի իրենք, առաջնագիծ մեկնելու հարցում, ցուցաբերեն զսպվածություն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Շնորհակալություն, ջերմ ընդունելության համար

ԵԱՏՄ միջգերատեսչական նիստին մասնակցելու համար, բացի ԵԱՏՄ անդամ երկրների վարչապետներից, Հայաստան էին ժամանել նաեւ անդամ մյուս երկրների պատվիրակություններն ու լրագրողներ: Հենց վերջիններս էլ նիստի ժամանակ, իրենց հաստկացված սրահում դժգոհել են հյուրընկալությունից՝ նշելով, որ լրագրողներին ոչ ուտելիք են տալիս, ոչ էլ նորմալ ինտերնետ կա: Սա՞ է հայկական ավանդական հյուրընկալությունը, հեգնանքով նկատել են լրագրողները, հատկապես ռուս: Ի դեպ, վերջիններս նաեւ շեշտել են, որ աշխարհի ոչ մի երկրում նման բան իրենք չեն տեսել, իսկ ռուս լրագրողները, հասկանալի է, աշխարհի շատ երկրներ են տեսել:

Իսկ նիստի ընթացքում Ղրղզստանի վարչապետը շնորհակալություն է հայտնել Կարեն Կարապետյանին՝ նիստը հրաշալի կազմակերպելու եւ ջերմ ընդունելության, հյուրընկալության համար: Այդ պահին հաստկապես ղրղզ լրագրողները սկսել են ծիծաղել՝ բարձր գնահատելով իրենց վարչապետի հումորի զգացողությունը:

Ի դեպ, հաջորդ անգամ ԵԱՏՄ վարչապետները կհանդիպեն եկող տարվա հունվարի վերջին, կամ փետրվարի սկզբին՝ Սոչիում: Հայաստան հայտնի չէ, թե էլ երբ կգան, կամ կգա՞ն արդյոք:

Հ. ԱՖ.

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 6

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

պ.գ.թ. Էներգետիկ աշխարհաքաղաքականության եւ միջազգային անվտանգության մասնագետ

Հայաստանի էներգետիկ հիմնախնդիրը ԵՄ եւ ԵԱՏՄ ընտրության առանցքում

Անցնող մի քանի օրերը թերեւս աչքի էին ընկնում մի քանի հարցերով՝ ԵՄ-ՀՀ համաձայնագրի նախնական տարբերակի հրապարակմամբ եւ ԵԱՏՄ վարչապետների հավաքով քաղաքամայր Երեւանում: Ինչումն է այս երկու հավաքների հետաքրքրությունը: Կարծում եմ, առաջին հերթին նրանում, որ Հայաստանի տնտեսական զարգացումը ավանդաբար կապում են այս երկու միավորումների հետ սերտ հարաբերություններով, ինչը հատկապես հստակ կերպով արտահայտվում է ՀՀ-ի արտաքին առեւտրաշրջանառությամբ: Այս երկու կառույցները՝ ԵՄ-ն եւ ԵԱՏՄ-ն մեր երկրի արտաքին առեւտրաշրջանառության հիմնական գործընկեր կառույցներն են, հետեւաբար հետաքրքրությունը դրանց նկատմամբ հատկապես կարեւոր է:

Ասոմպայանի փակման խնդրի առկայությունն այս համաձայնագրում որքան էլ որ զարմանալի էր, միաժամանակ հավանաբար օրինաչափ, քանի որ ԵՄ-ն նաեւ հայտարարում է, որ պատրաստ է ֆինանսապես եւ տեխնիկապես աջակցել այդ կառույցի փակման գործընթացին: Նկատենք, որ այս մոտեցումը կարեւոր է, քանի որ վաղ թե ուշ մենք կանգնելու ենք ներկա կայանի փակման խնդրի առաջ, եւ հետեւաբար նմանատիպ աջակցությունը, ինչպես ասում են, ավելորդ չէ: Առավել եւս, որ համաձայնագրում չի նշվում, թե երբ պետք է փակվի ատոմակայանը: Նման կոնկրետության բացակայությունը որոշակի հույսեր է տալիս, որ հայկական կողմը կարող է մանրուել ըստ իր նպատակահարմարության, սակայն եվրոպացիները եվրոպացի չէին լինի, եթե փակման մասին հոդվածում, մի թեթեւ թվացող, բայց իրականում կարեւոր հիշատակում չկատարեին. դա ատոմակայանի փակման համար «ճանապարհային քարտեզի» ստեղծման պայմանն է: Ահա հենց այս քարտեզ կոչվածի շուրջ բանակցություններում ԵՄ-ն կոչ կերպով կդնի ատոմակայանի փակման ժամանակացույցի պահանջը:

Իսկ ինչով է էներգետիկ առումով մեզ հրապուրում ԵԱՏՄ-ն, որի վարչապետները կառույցի նախագահ **Տիգրան Սարգսյանի** գլխավորությամբ այս օրերին հավաքվել էին Երեւանում: Ըստ այդ կառույցի ստեղծման շուրջ կնքված պայմանագրի, ինչպես արդեն նշեցի, խնդիր է դրվում ստեղծել էներգետիկ մեկ միասնական շուկա: Ինչումն է այս մոտեցման «հրապուրանքը» Հայաստանի համար: Ինչպես հայտնի է, ՀՀ էներգետիկ զարգացման հիմնական խոչընդոտը ներքին շուկայի փոքրությունն է եւ արտահանման սահմանափակությունը, պայմանավորված Ադրբեջանի եւ Թուրքիայի կիրառած շրջափակման քաղաքականությամբ:

Այս սահմանափակումը չի նպաստում էներգետիկ անվտանգության զարգացմանը, առավել եւս դրան ռազմավարական խորություն տալու առումով: Ստեղծելով էներգետիկ առումով բավականին ինքնաբավ համակարգ, մենք հասել ենք դրա հնարավորությունների մախսիմումին, ինչը նշանակում է, որ եթե չիրականացվեն դեպի հեռանկարը ուղղված քայլերը, ապա մի քանի տարի անց մենք կկանգնենք հենց այդ ինքնաբավության կորստի առաջ, առավել եւս, որ ԵՄ-ն պահանջում է ատոմակայանի փակում:

Հետեւաբար հիմնական խնդիրն այն է, թե որն է դրա այլընտրանքը: Այս առումով մեր որոշ գործընկերներ նշում են, որ դա կարող է լինել վերականգնողական էներգիան: Սակայն համաշխարհային փորձի ուսումնասիրությունը, հատկապես փոքր եւ աղքատ տնտեսություն ունեցող պետություններում, ցույց է տվել, որ դա չի կարող լինել այլընտրանք ոչ միայն իր թանկության, այլ առաջին հերթին վերականգնող էներգիայի անկայունության պատճառով: Իսկ էներգահամակարգի անկայունությունը դա պետության տնտեսական համակարգի վերջն է:



Այս պայմաններում ԵԱՏՄ միասնական էլեկտրահամակարգի ստեղծման գաղափարը դառնում է այն այլընտրանքը, որը կարող է օգնել Հայաստանին դուրս գալ այս վիճակից, եթե իհարկե այդ հարցին մոտենան խելամտորեն եւ իրականացնեն համապատասխան քաղաքականություն դեպի նորաստեղծ էլեկտրաէներգիայի միասնական շուկա դուրս գալու: Այդ շուկայի առավելությունն ու գրավչությունը նրանում է, որ նախատեսվում է ստեղծել էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի միասնական հարթակ, ինչը նշանակում է, որ Հայաստանը կարող է առանց դժվարության այդ շուկայում վաճառել իր էլեկտրաէներգիայի ավելցուկը, որը այս պահին կազմում է մոտ 1 մլրդ կվ/ժ տարեկան: Սակայն նկատենք, որ Հայաստանի հնարավորությունը շատ ավելին է եւ արտահանման հզոր շուկա դուրս գալու ու, առավել եւս, այդ ապրանքի բորսայական վաճառքի կազմակերպման դեպքում հնարավոր կլինի նաեւ գործարկել էլեկտրաէներգիայի գներացման այլ հզորություններ եւս:

Էլեկտրաէներգիայի մեծածավալ արտահանման հնարավորությունը ռազմավարական նշանակություն ունի ՀՀ-ի համար, քանի որ այսպիսով Հայաստանի էներգետիկ համակարգը դառնում է գրավիչ նաեւ ներդրումների առումով, իսկ մենք այն բացառիկ երկրներից ենք, որ դեռ ունենք բարձր որակավորում ունեցող մասնագետներ այս բնագավառում ու համապատասխան լոգիստիկա: Նման զարգացումները՝ ԵԱՏՄ ընդհանուր շուկայի ստեղծումը, կոմերցիոն առումով գրավիչ կդարձնի նաեւ նոր ատոմային կայանի ստեղծման գաղափարը, ինչը հնարավորություն կտա ներդրումներ ներգրավել այս ծրագրի իրականացման համար ու հանգիստ ուրով դիմել ԵՄ-ին, որ կնքված համաձայնագրով ֆինանսավորի նախկինի փակումը:

Էրոտիկ երթեւեկության հետեւանքները

Հանրային տրանսպորտում հայտնվել են ուշագրավ գրություններ: Նույն թեմայի շուրջ, բայց տարբեր, ես, օրինակ, հանդիպել եմ այս երկուսին. **Մի դիպչիր իմ մարմնին. իմ մարմինը հանրային տարածք չէ**: Եւ ավելի զիլ մի բան՝ **Հասարակական տրանսպորտում մարմինների հպումը համարվում է սեռական ոտնձգություն**: Անկեղծ ասած, հատկապես վերջին գրությունից հետո, երթուղայինում կանգնած, հանկարծ հասկացա, որ իմ հանդեպ սեռական ոտնձգություն է անում՝ միանգամից երեք մարդ, որոնցից երկուսը՝ կին, մեկը՝ տղամարդ, իսկ ես սեռական ոտնձգություն եմ անում երկու կնոջ նկատմամբ, քանի որ առաջինի աթոռից բռնվել եմ (որպեսզի վայր չընկնեմ), ու մատներով դիպչում են նրա մազերին, իսկ երկրորդի թեւին հպվել եմ ոտքով, քանի որ հետեւից կանգնած եւ իմ հանդեպ սեռական ոտնձգություն կատարող կինը ինձ ազատ տարածություն չի տվել: Ու մինչ ես ուզում էի բղավել՝ ողջ երթուղայինով մեկ՝ մի դիպչեք իմ մարմնին, իմ մարմինը հանրային տարածք չէ, անմիջապես հասկացա, որ եթե հանկարծ նման բան անեմ, մի քանիսն ինձ կմեղադրեն սեռական ոտնձգության համար, իսկ ես երթուղայինից կիջնեմ խայտառակված, քանի որ միանգամից երեք մարդ իմ հանդեպ նույնն արած կլինի: Մի խոսքով, սուս ու փուս շարունակեցի ճանապարհս, լավ է, որ վարորդի կողքին երկու նստատեղերից մեկն արագ ազատվեց, եւ ես արագորեն նեստվեցի առաջ, ու կողքիս նստողի հետ փոխադարձավար սեռական ոտնձգություն անելով հասանք տեղ:

Սա ի՞նչ է, ո՞վ է որոշել. Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչությո՞ւնը, իրենք տեղյակ ե՞ն, իսկ ինչո՞ւ ոչ: Լավ, եթե մարմինների հպումը սեռական ոտնձգություն է համարվում հանրային տրանսպորտում, բա երբ ուղեւորներից մեկը կամովին խնդրում է, որ իր դրամը փոխանցես վարորդին ու ձեր ձեռքերը հպվում են, դա ի՞նչ է՝ սեռական ակտ փոխադարձ համաձայնությա՞մբ, կամ երբ ձեռքդ մեկնում ես եւ օգնում, որ կինը բարձրանա կամ իջնի երթուղայինից, ուրեմն հաջորդ իսկ վայրկյանին պետք է ՁՄԳՍ գնաք, քանի որ բանը բանից անցե՞լ է: Իսկ եթե երեխային ես հպվում, դա արդեն մանկապղծությո՞ւն է...Ես իհարկե հասկանում եմ, որ այս գրությունները կարող են լինել առանձին վարորդների սեռական երեւակայության նեղլիկ սահմանների ապացույցը, բայց չեմ հասկանում, թե ինչո՞ւ համապատասխան տեղի համապատասխան վարչությունը չի ուսումնասիրում, թե ի՞նչ գրություններ են փակցնում մեր տրանսպորտում եւ ինչ գրություններ են պատռում, օրինակ՝ «**Տրանսպորտում ծխել չի կարելի**» գրությունները պատռում են, ինչը նշանակում է, որ տրանսպորտում ծխել կարելի է, մանավանդ երբ ենթարկվում ես սեռական ոտնձգության կամ փոխադարձ համաձայնությամբ սեռական ակտից հետո: Բա ոնց:

Հասկանում եմ նաեւ, որ տրասպորտում հաճախ լինում են մարդիկ, որոնք սկզբունքորեն չեն ուզում նստել, քանի որ կանգնած ավելի հարմար է ակամայից դիպչել կողքի կանանց, բայց, կներեք, եթե քաղաքի այսինչ նրբանցքում օրվա այսինչ ժամին այսինչ մեկը բռնաբարել է այնինչ մեկին, դա դեռ չի նշանակում, որ քաղաքի տվյալ նրբանցքում օրվա տվյալ ժամին բոլոր անցորդները պոտենցիալ բռնաբար են կամ բռնաբարության զոհ:

Բայց մյուս կողմից, այդ գրությունները կարող են փրկել հասարակական տրանսպորտը: Մարդիկ, տեսնելով, որ երթուղայինում նստելու տեղ չկա, այլեւս չեն նստի, քանի որ որեւէ մեկը չի ցանկանա ենթարկվել սեռական ոտնձգության, ինչն անխուսափելի է, երբ երթուղայինում կանգնած ես: Սա էլ կնշանակի, որ երթուղայինները չեն բեռնվի, վարորդները կբողոքեն, որ շատ փող չեն աշխատում, գծի տերերն էլ կսկսեն մեծ ավտոբուսներ բերել, բայց քանի որ ավտոբուսն էլ է հասարակական տրանսպորտ, որտեղ նույնպես միմյանց հպվել չի կարելի, այնտեղ եւս մարդիկ այդ վախից չեն կուտակվի: Ավտոբուսներն էլ ավելի հաճախ կսկսեն աշխատել, որ մարդկանց տեղափոխեն՝ առանց սեռական ոտնձգությունների ենթարկելու: Հա, մեկ էլ մարդիկ դռների մոտ չեն հավաքվի, որպեսզի իջնողները նրանց սեռական ոտնձգության չենթարկեն, իսկ ավտոբուսներում ամեն աթոռի դիմաց դրված կլինեն սեղաններ՝ վրան մոխրաման, որ ուղեւորները կարողանան հանգիստ ծխել. թե չէ ինչո՞ւ պատուհանի մոտ նստած վարորդը կարող է ծխել, իսկ պատուհանի մոտ նստած ուղեւորը՝ ոչ, մանավանդ երբ ամբողջ քաղաքը խցանումների մեջ է, ճանապարհը՝ երկար:

Մի խոսքով, հասարակական տրանսպորտին մեծ փոփոխություններ են սպասվում: Վարչապետն, օրինակ, հանձնարարել է վերացնել խցանումները: Բացի նրանից, որ դա կօգնի ավելի արագ տեղ հասնել, փաստորեն նաեւ կնպաստի, որ մարդիկ ավելի քիչ սեռական ոտնձգությունների ենթարկվեն կամ ենթարկեն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՓՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 7

Փորձագիտական հանրության խնդիրները Եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացում

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու, քաղաքագիտության դոկտոր

Հոկտեմբերի 25-ին Երեւանում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի նախօրեին Եվրասիական տնտեսական հանձնաժողովը անցկացրեց կլոր սեղան «Փորձագիտական եւ կրթական հանրության դերը եվրասիական տնտեսական ինտեգրման մեջ» խորագրով: Այդ նշանակալից ձեռնարկը կազմակերպվել էր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, հետազոտության եւ վերլուծության «Ինտեգրացիա եւ զարգացում» հասարակական կազմակերպության եւ Եվրասիական փորձագիտական ակումբի հետ համատեղ: Ներկա էին ԵՏՀ պատասխանատու աշխատողներ (դեպարտամենտների տնօրեններ, բաժնի պետեր, Հայաստանի եվրասիական թեմատիկայով զբաղվող գիտափորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ): Օրակարգում քննարկվում էր այն հարցը, թե ինչպես կարող են լավագույն ձեւով համագործակցել փորձագետները ԵԱՏՄ անդամ-երկրներում միմյանց միջեւ, ամբողջությամբ վերցրած եվրասիական ինտեգրացիոն տարածքում՝ կառավարությունների եւ վերազգային կառույց հանդիսացող ԵՏՀ-ի հետ: Սա այնքան հասունացած հարց է, որ կառավարությունների ղեկավարները երեւանյան նիստի ժամանակ նույնպես քննարկեցին այն:

Հայ փորձագետները եւ Հայաստանի մասնակցությունը ինտեգրացիոն գործընթացին

Պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանը** կլոր սեղանին մասնակցող չորս տասնյակ փորձագետներին ներկայացրեց իր ընթացիկ հետազոտության արդյունքները Հայաստանի տնտեսության վիճակի մասին այս տարվա առաջին ութ ամիսների տվյալների հիման վրա: Այս խիստ պահանջարկված հետազոտությունը պերճախոս վկայում է, որ այս տարի մեր տնտեսության վիճակը բնորոշող կարեւորագույն ցուցանիշները շատ հուսադրող են: Անցյալ տարվա հետ համեմատած աճում են թե՛ արտահանման, թե՛ ներկրման ծավալները: Հետաքրքրական է, որ երկնիշ թվերով են աճում արտահանման ծավալները դեպի Ռուսաստան, ընդ որում խոսքը վերաբերում է գլխավորապես պատրաստի արտադրանքի արտահանմանը, ինչը բնութագրիչ նշանակություն ունի մեր տնտեսության համար: Եվրոպական Միություն առաքվող ապրանքի ծավալները նույնպես մեծացել են, բայց այստեղ մենք գործ ունենք հումքի գների աճի հետ: Երկնիշ թվերով են աճում արդյունաբերությունը եւ ծառայությունների ոլորտը: Հետընթաց զարգացում են ապրել շինարարությունը եւ գյուղատնտեսությունը; Սակայն ուշագրավ է, որ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալները նույնպես աճում են երկնիշ թվերով: Էականորեն աճել են Ռուսաստանից Հայաստան մտնող տրանսֆերտների ծավալները, կազմելով ավելի քան 1.5 մլրդ. դոլար: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ այս տարի, մինչեւ տարեվերջ, այդ ցուցանիշը էլ ավելի կմեծանա: Այսպիսով, կարելի է ասել, որ այստեղ եւս ոչ միայն վերականգնվել են նախաճգնաժամային ցուցանիշները, այլեւ առկա է բացարձակ զարգացման միտում: Քանի որ Ռուսաստանի տնտեսությունը մտել է կայուն զարգացման փուլ եւ մոտակա 2-3 տարիներին ակնկալվում է տնտեսական աճ, այն արդեն ունեցել է դրական ազդեցություն Հայաստանի, Ղրղզստանի, ինչպես նաեւ Տաջիկստանի տնտեսությունների վրա: Ռուսաստանի աշխատանքի շուկան կրկին վերադարձել է իր գրավչությունը հայ արտագնա աշխատողների համար: Այս ցուցանիշները գալիս են հաստատելու, որ եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացը մոտակա տարիներին նույնպես վերընթաց է արձանագրելու: Ուշագրավ է, որ անդամ-երկրների փորձագիտական հանրությանը համակած այն միտքը, թե պետք է ձեւեր գտնել միմյանց հետ համագործակցելու, փորձագետների ձայնը ավելի լսելի դարձնելու եւ գիտական հաստատություններն ու փորձագիտական շրջանակները ինտեգրման հաջողությանը նպաստող խնդիրներին ծառայեցնելու համար, վերջապես լսելի դարձավ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համար:

ԵՏՀ-ում բացահայտ ասում են նաեւ, որ իրենց հետաքրքրում է կառուցողական եւ կոմպետենտ քննադատությունը: Այն կարող է ծառայել մշակվող որոշումների որակը բարձրացնելուն: Սա նոր բան է եւ պետք է հասկանալ, որ հանձնաժողովի վերլուծաբանները սկսելու են աշխատել նաեւ քննական ու քննադատական նյութի մեծ ծավալների հետ:

Թույլ չտալ բացասական միտումներին քայքայելու եվրասիական տնտեսական ինտեգրումը

Ճանաչված սոցիոլոգ **Սամվել Մանուկյանը** մանրամասնորեն վերլուծել է սոցիոլոգիական գիտության դերը ինչպես հանուն ինտեգրացիոն գործընթացի հաջողության գործում, այնպես էլ նախկին ԽՍՀՄ փլուզման գործում: Հետաքրքրական է, որ արեւմտյան քաղաքական շրջանակներն ու հատուկ ծառայությունները շատ լուրջ ու հետեւողական ջանքեր են գործադրել 20-25 տարի առաջ նախկին ԽՍՀՄ-ի փլուզումը անշեղ դարձնելու նպատակով: Սոցիոլոգիան որպես գիտություն այսօր տրամադրում է գործիքակազմ, որը քաղաքական զենք է դառնում Արեւմուտք-Ռուսաստան քաղաքակրթական բախման եւ գլոբալ առճակատման մեջ: Շատ տարբեր, ոչ միշտ օբյեկտիվ, հաճախ ոչ կոմպետենտ միջոցներով անցկացվող զանազան սոցիոլոգիական հարցումները սկսում են «փաստարկ» դառնալ հասարակական մանիպուլիացիաների եւ, մասնավորապես, հակառուսական, հակաեվրասիական տրամադրությունների բորբոքման համար: Ահա, թե ինչու ազնիվ եւ անկաշառ սոցիոլոգների կարիքը գնալով կարեւորվում է, իսկ նրանց հետազոտությունների արդյունքերը դառնում են կառավարությունների ու քաղաքական շրջանակների համար շատ պահանջված:

Ճանաչված վերլուծաբան **Գագիկ Հարությունյանը** տարբեր առիթներով ասել է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո եվրասիական տարածքը շատ երկար ժամանակ աշխարհում ամենաանգաղափարն է ու աղագաղափարականացվածն է եղել: Սա այնքան ակնհայտ զարմանքի արժանի երեւույթ է, որ դրան ուշադրություն էին դարձրել նաեւ շատ արեւմտյան տեսաբաններ: Եվրասիական տնտեսական ինտեգրումն այսօր ընդգծում է «տնտեսական» լինելու հանգամանքը: Այլ կերպ ասած, Եվրասիական տնտեսական հանձնաժողովում քաղաքական ինտեգրման հարցեր չեն կարող քննարկվել: Բայց փորձագիտական շրջանակներում մեծապես հասունացած է այն գիտակցությունը, որ առանց գաղափարական ընդհանրությունների, առանց քաղաքակրթական միասիրության, առանց միմյանց մշակութային ու ավանդական արժեքները իմանալու, հարգելու ու պահպանելու, միայն առեւտրի ու փող վաստակելու սկզբունքները հռչակելով, շատ հեռու չենք գնա: Մեր աչքի առաջ ունենք եվրոպական ինտեգրման դերը, որտեղ տասնամյակներով իշխող քաղաքական շրջանակները հարյուր միլիոնավոր մարդկանց մեջ ներարկում էին «Եվրոպան մեր ընդհանուր տունն է, մեր մեծ հայրենիքը» գաղափարը: Ճիշտ այդպես կարող է լինել եւ Եվրասիական տնտեսական միության հետ, եթե այն իսկապես շռնդալից զարգացում ապրի, շահավետ ու օգտակար լինի այս տարածքում բնակվող ժողովուրդների համար: Ինչ-որ տեղ, ինչ-որ պահից սկսած պետք է մտածել ընդհանուր տան գաղափարը զգուշորեն եւ հմտորեն մեր հասարակություններում քննարկել սկսելու մասին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը այս պահին դեռ նման քննարկումներ անցկացնելու համար պատրաստ այսպես չէ: Բայց անդամ-երկրների փորձագետների հետ այս եւ սրանց նման հարցերը դնելու իրավունք, կարծում եմ, երեւանյան գագաթաժողովից հետո ունենալու է:

Միասնական տարածքը ինտեգրման օգտին կարեւորագույն փաստարկ

Կլոր սեղանին մասնակցող մոսկովյան հյուրերը ներկայացնում էին այն զգալի աշխատանքը, որ տարվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ապրանքների, փողի, ծառայությունների ու մարդկանց ազատ տեղաշարժը ապահովելու, ներքին առեւտրին խանգարող արգելքների վերացման նպատակով: Անցած 2.5 տարիների ընթացքում քիչ բան չի արվել այս ուղղությամբ: Մոտակա 5-7 տարիների ընթացքում նպատակաուղղված աշխատանք է տարվելու միասնական արդյունաբերական, միասնական առեւտրական, միասնական էներգետիկ եւ այլ տարածքներ ձեւավորելու ուղղությամբ: Տնտեսագետ **Ատոթ Թավադյանը** գտնում է, որ եթե Հայաստանը չմտներ ԵԱՏՄ կազմի մեջ, ապա մեր տնտեսության վնասները կկազմեին տարեկան 500 մլն. դոլար: Հիմա ակնհայտ է դառնում, որ շուկայական հարաբերությունների զարգացման արդյունքում, օրինակ՝ նավթի եւ գազի բորսայական առեւտրի պայմաններում տեսանելի հեռանկարում վառելիքի գները Հայաստանի համար կարող են էլ ավելի էժանանալ: Առայժմ սա տեսական հնարավորություն է, բայց այն իրատեսական է թվում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա գլոբալ տնտեսության մեջ դրական միտումների պայմաններում մեր տնտեսության մեջ դրական տեղաշարժերը այնքան նկատելի են, որ տարվա սկզբից արդեն երրորդ անգամն է, ինչ փոխվում է կանխատեսումը տարեվերջին ներքին համախառն արդյունքի ցուցանիշի աճի վերաբերյալ: Եթե տարվա սկզբին միջազգային հեղինակավոր կառույցները Հայաստանի համար կանխատեսում էին ՀՆԱ-ի մինչեւ 2% աճ, իսկ տարվա կեսերին 3,2%-ի աճ, ապա այժմ՝ 8 ամսվա արդյունքով կանխատեսվում է 4% եւ ավելի աճի հնարավորություն: Մենք ասել ենք եւ կրկնում ենք, որ տնտեսության առողջացման համար օրհասական կարեւորության հարց է մինչեւ 7% ՀՆԱ-ի տարեկան աճի ցուցանիշին հասնելը: Իսկ դա հնարավոր է 2019 թ., եթե բոլոր շահագրգռված օղակները լարված աշխատեն եւ չփոխվեն գլոբալ տնտեսական տրենդները:

Այս դատողությունները նոր իմաստ են ստանում տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում: Եթե փորձագիտական հանրությունը ազնիվ ու կոմպետենտ ձեւով քննարկի ու հասարակության մեջ տարածի մեր երկրի զարգացման հիմնական միտումների մասին գիտափորձագիտական եզրակացությունները, մենք ոչ միայն մարդկանց կզինենք լավատեսությամբ եւ համբերությամբ, այլեւ հայկական բիզնեսին, կառավարող շրջանակներին, գիտական հանրությանը կմղենք ավելի նպատակաուղղված, ավելի ազգօգուտ ջանքերի: Վերջապես պետք է գա ժամանակը, երբ մեր երկրի շարքային քաղաքացիները, ամենատարբեր առիթներով արտասահման տեղափոխված, բայց ականջը դեպի Հայաստան պահող հայրենակիցները կհավատան, որ մեր երկրի համար էլ կգան լավ օրեր: Տնտեսագետները ասում են, որ ԵԱՏՄ-ին անդամակցելը հնարավորություն է, որից կարելի է օգտվել: Մեր աշխատասեր եւ համարձակ հայրենակիցների շնորհիվ մեր տնտեսության շատ ճյուղեր վերակենդանացման ու զարգացման ճանապարհ են բռնել: Նրանց պետք է օգնել: Երեւանում անցած գիտափորձագիտական հանրության վերոհիշյալ համաժողովը ցույց տվեց, որ մեր մասնագետները ուժեղ են, ռուս, բելառուս կամ ղազախ գործընկերներին ոչնչով չեն զիջում, իսկ առանձին դեպքերում մեր գաղափարներն ու մոտեցումները շնորհակալությամբ ընդունվում են ԵՏՀ «վերեւներում»: Աշխատանքի մեծ դաշտ կա, եթե նիրհից դժվարությամբ արթնացող մեր շատ գիտնականներ ու փորձագետներ որոշեն ներգրավվել եվրասիական ինտեգրացիոն գործընթացներում:

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 8

Նոր բացահայտումներ Դրոյի անցյալի վերաբերյալ

Խոսքը վերաբերում է 20-րդ դարի առաջին կեսին հայ ռազմական ու պետական ասպարեզում գործած ամենահակասական կերպարներից մեկին՝ Դրասամաս Կանայանին: Նրա հախուռն եւ արկածախնդիր բնավորությունը, առձակատումների սիրահար եւ հրահրող լինելը, փողասիրությունն ու հակառակորդներին եւ մրցակիցներին ամեն գնով ոչնչացնելու հակությունը չեն վրիպել նրա կյանքին ու գործունեությանը անդրադարձած շաս պատմաբանների ու գրողների՝ անգամ Չարենցի եւ Անդրանիկ Ծառուկյանի ուշադրությունից: Նրա կասկածելի կապերի մասին թափանցիկ կամ կիսաթափանց ակնարկություններ արել են նույնիսկ նրա կուսակիցները: Սակայն առաջին անգամն է, որ ամերիկյան CIA-ի հետ նրա առնչությունների, վերջինիս գործակալը լինելու մասին է վկայվում, հիմք ընդունելով ամերիկյան աղադասակարգված փասաթղթերը, որոնց ծանոթացել է կանադահայ քաղաքական գործիչ Վիգեն Աթթարյանը (Viken L. Attarian), որի անգլերեն գրության այդ հատվածը թարգմանաբար ներկայացնում ենք սորեւ: Ավելացնենք միայն, որ Վիգեն Աթթարյանը մարտահրավեր է նետում որեւէ մեկին, ով կհերքի իր բացահայտումները: «Ես խորն եմ ուսումնասիրել նրան», գրում է նա եւ առաջարկում այցելել «three Ws.cia.gov/library/readingroom/historical-collections» կայքը, որտեղ վերջին տասը տարիների ընթացքում շաս փասաթղթեր աղադասակարգվել են (կամ գաղտնազերծվել) եւ դարձել հանրության սեփականությունը:

«Այնտեղ դուք տքեք «PELOPS» անունը, որը Դրոյի (DROSTAMAT KANAYAN) ծածկանունն էր ամերիկյան կենտրոնական հետախուզական վարչության (CIA) շարքերում, եւ շաս հետաքրքրական փաստեր կգտնեք. զեկույցներ, հանդիպումների արձանագրություններ, գումարների վճարումներ եւ զինամթերքի առքումների (40-50-ական թվերին) մանրամասներ, նաեւ աղացույցներ, որ նա ընդգրկված է եղել Իրանում հակա-Մուսադեղյան շարժմանը, եւ Բեյրութում 50-ականների հակա-կոմունիստական գործունեություններին, որին զոհ գնացին հայեր, եւ որը հող նախապատրաստեց 1958-ի եղբայրասպան քաղաքացիական պատերազմի համար: Դա նաեւ այն շրջանն էր, երբ Անթիլիասի նոր կաթողիկոսի ընտրությունները պետք է կայանային: Վկայություններ կան նույնիսկ այն մասին, որ նախքան CIA-ի կողմից հավաքագրվելը, Դրոն առնչություններ է ունեցել Բրիտանական հետախուզական մարմինների հետ:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն (ARF) այնտեղ նշված է AIN սկզբնատառերով:

Արխիվային նյութերը զարմանալի բացահայտումներ են պարունակում: Դրանցում անդրադարձ կա մասնակցելու 3-րդ (այո՛, երրորդ) համաշխարհային պատերազմի, որի ընթացքում Դրոն առաջարկում է ազատագրել Հայաստանը Խորհրդային Միությունից, նշելով, որ դա AIN-ի (ARF-ՀՅԴ) առաջնահերթ խնդիրն է: Թուրքիայից պահանջատիրության մասին ոչ մի խոսք չկա այնտեղ: Ընդհակառակը, փաստաթղթում կոչ է արվում հայերին սպասել մինչեւ թուրքերը ինքնակամ հողերը կզիջեն «ազատագրված» Հայաստանին: Ենթադրում եմ՝ մեր «սեւ աչքերի» համար: Խոսք չկա նաեւ այն մասին, որ նման համաշխարհային պատերազմի պարագայում Հայաստանն էլ հիմնովին կարող է կործանվել:

Բայց խոսք կա այն մասին, որ ՀՅԴ-ն հաջողությամբ ձեռք կգցի Բարեգործականը (ՀԲԸՄ-ն):

Ամեն ինչ ուղղակի ցնցող է: Պարզապես հետաքրքրական պիտի լիներ ծանոթանալ նաեւ KGB-ի կամ Օսմանյան գաղտնի ոստիկանության արխիվների հետ: Ո՞վ գիտի ինչ նորություններ կարող ենք դեմ հանդիման գալ դրանցում: Բայց պատրաստ ենք, արդյոք, այդ ճշմարտությունների բացահայտմանը», ավարտում է Վ. Աթթարյանն իր գրությունը:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նյու Յորք

Ջորջ Սորոսն՝ ահաբեկիչ

Այսպիսի վերտառություն էր կրում օգոստոսի 20-ին ամերիկացի միլիարդատեր Ջորջ Սորոսի դեմ Սպիտակ տան կայքում ստեղծված միջնորդությունը (petition), որի վերջնաժամկետը լրացավ սեպտեմբերի 19-ին: Այն հավաքեց 147, 780 ստորագրություն, գերազանցելով պահանջված 100 հազարը: Միջնորդության մեջ նշվում է, որ Սորոսը կամավոր եւ շարունակաբար փորձել է ապակայունացնել ամերիկյան հասարակությունը կիրառելով Ալինսկու մոդելի ահաբեկչական մարտավարություն, ստեղծել եւ ֆինանսավորել է տասնյակ կազմակերպություններ՝ փորձելով նպաստել Մ. Նահանգների սահմանադրական համակարգի փլուզմանը: ԱՄՆ Արդարադատության կառույցը (DOJ) պետք է անմիջապես հայտարարի Ջորջ Սորոսին, նրա ստեղծած կազմակերպությունների անդամներին՝ ներքին ահաբեկիչներ եւ համաձայն գործող օրենքի (Civil Asset Forfeiture law), պետք է առգրավվի նրա անձնական հարստությունը:

Որպես ետնաբեմում գործող աներեւույթ բեմադրիչ, նա իր «ուլտրա - ժողովրդավարական» ծրագրերը սիրում է մարմնավորված տեսնել աշխարհի փողոցներում, մասնավորապես՝ ամերիկյան իրականության մեջ, եւ դիվային հաճույք ստանալ դրանց արդյունքից: Շատերն են շփոթության մեջ: Ո՞վ է նա: Սատանայի փոխանորդը երկրի վրա, թե՞ ալտրուիզմի հասնող մարդասեր: Ջորջ Սորոս անվանը հաջորդում են՝ միլիարդատեր, մարդասեր, ներդնող, բարերար տիտղոսները: Սրանք իր մեկը մյուսին լրացնող նպատակային առաքելություններն են, որոնց միջոցով նա ձգտում է փոխել հասարակության մեջ ընդունված խաղի կանոնները: Նա մեկ օրվա ընթացքում կարողացել է ձեռք բերել մեկ միլիարդ դոլարի շահույթ, ու «ջրի» պես եկող փողը ջրի պես էլ ծախսվում է աշխարհում իր պատկերացրած ժողովրդավարությունը կյանքի կոչելու համար: Սորոսը համարվում է «գունավոր հեղափոխությունների» սեւ կարդինալը Վրաստանում եւ Ուկրաինայում: Նա իր հզոր ֆինանսական եւ քաղաքական լծակների շնորհիվ նպաստեց Հարավսլավիայում Միլոշեւիչի ռեժիմի տապալմանը եւ հետագայում Կոսովոյի անկախության կայացմանը:

Ամերիկայում նրա համար թիրախային է առանձնապես մեդիա ոլորտը, որի միջոցով նա կարողանում է հասարակական կարծիք ձեւավորել, ռասայական բախումներ հրահրել, ազդել ընտրությունների վրա, կառավարության մեջ ստեղծելով իր «կառավարությունը»:

«Ես հավատում եմ բաց հասարակության արժեքներին», ասում է նա: Աշխարհում գլոբալիզացիայի իր տեսլականը կայացնելու նպատակով նա ստեղծել է բազմաթիվ հիմնադրամներ, որոնց թվում ամենաարդյունավետը՝ ԲՀՀ «Բաց հասարակություն» հիմնադրամն է (OSF), որի գրասենյակները գործում են աշխարհի 60 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Դրանց գործունեության համար Սորոսը տրամադրում է տարեկան $600 միլիոն դոլար դրամաշնորհ:

Այս տարվա օգոստոսի 12-ին նա բոլորեց իր 87-րդ տարեդարձը: Համաձայն «Ֆորբս» պարբերականի, նա աշխարհի հարուստների ցուցակում զբաղեցնում է 19-րդ նիշը, $25 միլիարդ դրամագլխով: Այս կապիտալի զգալի մասն առաջացել է շուկայական մեքենայությունների եւ բանկային սպեկուլյացիաների արդյունքում: Լեգենդի պես է հնչում այն փաստը, որ նա կարողացել է «փլուզել» անգլիական բանկը, 1992-ին գերմանական մարկի դիմաց անգլիական ֆունտի անկման հաշվին վաստակելով մոտ 1 մլրդ. դոլար:

Սորոսի անվան հետ է կապվում ԱՄՆ նախագահ Թրամփի երդմնակալությանը հաջորդած միլիոնավոր կանանց բողոքի ցույցի կազմակերպումը Վաշինգտոնում՝ «Թրամփն իմ նախագահը չէ» կարգախոսով: Նրա ֆինանսավորմամբ է, որ ամերիկյան մեդիան չի դադարում հասարակությունը վարակել հաճախ՝ պարանոյայի հասնող հակառուսական տրամադրություններով: Նա ԱՄՆ դեմոկրատ երկու նախագահների՝ Բիլ Քլինթոնի եւ Բարաք Օբամայի ընտրարշավների գլխավոր հովանավորներից է: Սորոսը կորցրեց մեկ միլիարդ դոլար ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններում Հիլարի Քլինթոնի կրած պարտության պատճառով: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ Մ. Նահանգներում օրինականացվեց մարիխուանայի օգտագործումը, ինչի նկատմամբ կախվածությունն այսօր մեծ է անչափահասների շրջանում: 2015-ին Սորոսը տրամադրեց $33 միլիոն դոլար «Սեւամորթի կյանքը կարեւոր է» շարժմանը, ինչի արդյունքում ռասայական բախման օջախներ առաջացան Ֆերգյուսընում, Բալթիմորում, Չիկագոյում, Մերիլենդում: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ Օբամայի օրոք օրինականացվեց միասեռների ամուսնությունը ԱՄՆ ողջ տարածքում: Նրա նախագծերից մեկը՝ մահացու հիվանդների կամավոր կյանքից հեռանալու մասին օրենքը (euthanasia), առայժմ գործում է ամերիկյան վեց նահանգներում: Այդ թեմայով իր ելույթներից մեկում Սորոսը խոստովանել է, որ օգնել է իր անբուժելի հիվանդ մորը կատարելու ինքնասպանություն:

Ուշագրավ փաստ է պարունակում Սորոսի մասին zerohedge կայքում զետեղված վերլուծականը, ուր ասվում է, որ Սորոսի օրակարգը հիմնված է Եվրոպայում ազգային սահմանների ոչնչացման եւ գլոբալիզացիայի վրա: Այն վերջերս հստակ դրսեւորվեց եվրոպական փախստականների ճգնաժամի ֆինանսավորման օրինակով: Երբեւէ մտածե՞լ եք, հարց է տալիս հոդվածի հեղինակը, թե ինչպե՞ս են մարդիկ այդքան քաջատեղյակ եղել Եվրոպայի միգրացիոն օրենքներից: Սորոսի OSF/ԲՀ հիմնադրամը սատարել է երրորդ աշխարհի մահմեդականների վերաբնակեցմանը Եվրոպայում: 2015 թ.-ին Sky News-ի թղթակիցը Հունգարիայի Լեսբոս կղզում հայտնաբերել է այսպես կոչված՝ «Միգրանտների ձեռնարկներ»: Ավելի ուշ պարզվել է, որ արաբերենով գրված այս գրքույկները Միջերկրական ծովն անցնելուց առաջ տրվել են փախստականներին «Բարի գալուստ ԵՄ» խմբի միջոցով, որի ֆինանսավորողը Սորոսի «Բաց հասարակություն» հիմնադրամն է: Նա իրականում «Մերկելի պլանի» ճարտարապետն է, եզրահանգում է zerohedge կայքի հոդվածագիրը:

Համաձայն վերոհիշյալ կայքի, Ջորջ Շվարց է եղել 1930-ին Բուդապեշտում, հունգարական հրեայի ընտանիքում ծնված կրտսեր արու զավակի անունը: Հունգարիայում ֆաշիստական օկուպացիայի ժամանակ, Ջորջի հայրը, հրեա փաստաբան՝ Թիվադարը, խուսափելու համար հետապնդումներից, քրիստոնեություն է ընդունել: 14 ամյա տղան այդ տարիներին համագործակցել է նացիստների հետ եւ նրանց տեղեկություններ հայտնել իրեն ծանոթ հրեա ընտանիքների եւ նրանց ունեցվածքի մասին: 1998-ին «60 ռոպե» հեռուստաալիքին տված հարցազրույցում Սորոսը գերմանական օկուպացիայի տարիներն անվանել է՝ «իմ կյանքի ամենաերջանիկ ժամանակը»:

Գլոբալիստական աշխարհայացքի ձեւավորմանը մեծապես նպաստել է հայրը, ով էսպերանտոյի՝ եվրոպական լեզուների հիման վրա հորինված արհեստական լեզվի կողմնակից էր: Հայրը սիրել է խոսել ընտանիքում միայն այդ լեզվով: Ապա փոխել է հրեական Շվարց ազգանունը եւ դարձել Սորոս, ինչը էսպերանտո լեզվում նշանակում է «կսավառնի» (will soar): Պատերազմի ավարտից հետո Սորոսը տեղափոխվել է Լոնդոն, որտեղ տեղի տնտեսագիտության դպրոցում ուսանելիս հանդիպել է իր գլոբալիստական հայացքների ձեւավորման կնքահայր, փիլիսոփա՝ Կարլ Պոպպերին:

Հայաստանում Սորոսի «Բաց հասարակություն» հիմնադրամը գործում է 1997-ից: Միայն այս տարի տարբեր ծրագրերի համար տրամադրվել է, ուշադրություն, ավելի քան կես միլիոն դոլար, համաձայն հիմնադրամի կայքում զետեղված դրամաշնորհների ցուցակի: Ասվում է, որ հիմնադրամը ստեղծվել է խթանելու Հայաստանում բաց հասարակության արժեքները, որին բնորոշ են օրենքի գերակայությունը, ժողովրդավար եղանակով ընտրված կառավարությունը եւ հզոր քաղաքացիական հասարակությունը...

Սորոսը Հայաստանի մասով, կարծես, լուրջ թերացել է: Հայ իրականության մեջ իր 20 տարիների գոյությունը առայժմ նման չէ այլ երկրներում առկա սորոսյան թափին: Այ, Ադրբեջանի հետ Սորոսի գործերը շաս ավելի հաջող են ընթանում: Ալիեւյան նախագահական կլանի փողերի լվացման վերաբերյալ լոնդոնյան հայտնի պարբերականի (The Guardian) բացահայտումները նրա «ձեռքի գործն է», ասում են:

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 9

Վանի հերոսամարտի աննկուն ղեկավարը՝ Արմենակ Եկարյան

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պգդ

82 տարի առաջ, հոկտեմբերի 20-ին վախճանվեց հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալներից Արմենակ Եկարյանը: Մարդ, ում ամբողջ գիտակցական կյանքը պայքարի ու հերոսացման տարիներ եղան: Ով աորեց ընդամենը 55 տարի, սակայն այդ տարիներն այնքան խիտ են, մեկը մյուսից նշանակալից իրադարձություններով այնքան հարուստ, որ ամենաարագ դիտարկման դեպքում նույնիսկ թվում է, թե նա աորել է առնվազն կրկնակին: Մարդ, ով այնքան ու այնպես նվիրվեց ազգի փրկության սրբազան գործին, որ անձնական կյանք գրեթե չունեցավ: Ով զինատարի դժվարագույն ու վտանգներով լեցուն օրեր աորեց, զենքը ձեռքին իր ազգի ու հայրենի եզերքների պաշտպանության եւ ազատության համար կռիվներ մղեց: Ով սեղմած ատամներով արյունարբու ոսոխին դիմակայելու ու անհավասար պայքարում հաղթելու վճռականությամբ հաղթանակներ կռեց:

Մարդ, ով այնքան շատ բան է արել իր ժողովրդի համար, ում կյանքն իր ուսանելի շատ կողմերով կարող է փայլուն օրինակ ծառայել մատաղ սերնդին, բայց մինչեւ օրս էլ ըստ արժանվույն գնահատված ու մեծարված չի Հայաստանում: Թեեւ համեմատելն այս դեպքում անշնորհակալ գործ է, սակայն չդիմանալով այդ գայթակղությանը նշենք, որ մեր օրերում երբեմն մեծարվել ու մեծարվում են մարդիկ, ովքեր իրենց կատարած գործերով Ա. Եկարյանի սվերում չեն էլ նշմարվի, սակայն...: Իսկ Վանի 1915 թ. հերոսական պաշտպանության ռազմական ղեկավարի, Վանի նահանգի ոստիկանության (Երկրապահ գնդի) ստեղծողի ու հրամանատարի, Եղեռնի տարիներին Վասպուրականի 150 հազարից ավելի հայության նահանջն անվտանգ կազմակերպողի ու քրդական հարձակումներից պաշտպանողի անունով փողոց, դպրոց անգամ չկա, նրա մասին բացի ռազմավար շրջանակների հետ շփում ունեցողներից, շատ քչերը գիտեն: Ի վերջո, նրա մասին մամուլում սփռված հիմնականում միմյանց կրկնող հոդվածներից բացի լուրջ ուսումնասիրություն էլ չկա:

Գաղտնիք չէ սակայն, որ այսօր մենք՝ որպես պատերազմական վիճակում գտնվող ժողովուրդ, այդպիսի իսկական ու իրական հերոսների կարիքը շատ ունենք: Հերոսներ, որոնց օրինակով սերունդներ պիտի դաստիարակվեն ու դիրքում կանգնած մարտիկները ոգեւորվեն:

Ծնվել է 1870թ. Վանում: 1887թ. ընդունվել է Արմենական կուսակցության շարքերը: «Ջինատարական հերթական փորձի ժամանակ ընկերոջ՝ Տիգրան Մահեյանի հետ ծոցված Պարսկաստան անցնելիս ձերբակալվում են: Բանտային դժնդակ պայմաններն ու դժոխային չարչարանքները ի վիճակի չեն լինում կոտրել աննկուն երիտասարդին եւ յուրովի մկրտություն են դառնում ապագա ազատամարտիկի համար: Բանտից դեռ նոր ազատված, ամբաստանվում է հանրահայտ Ավոյի փախուստի կազմակերպման համար եւ ստիպված ծածուկ անցնում է Պարսկաստան: Այստեղ ազատամարտիկների հետ վերաբինում են Դերիկի վանքը, ամրացնում այն ու դարձնում ոչ միայն իրենց համար բնակատեղի, այլեւ հենակետրոն դեպի Վան զենք փոխադրելու ճանապարհին:

Եկարյանի ղեկավարությամբ մի շարք անգամներ Սալմաստից Վան զենքի փոխադրման անցումներ են կազմակերպվում: Ամեն անգամ վտանգներով լեցուն Թավրիզ-Սալմաստ 150 կմ-անոց ճանապարհը կտրում-անցնում էին ոտքով, գիշերները, զենքի ծանրության տակ կքած ու ամեն րոպե սպասելով թշնամու գնդակին: Վ. Գյոքչյանը նշում էր, որ «Եկարյանը ծնած էր մարտիկ ու ղեկավար, ուրով քաջ ու կորովի, հոգիով հայրենասեր ու անկեղծ, որոնց աղաղակող ապացույցը տված էր 100 անգամներ»:

1896-ի մայիսի 27-ին զենք բերելու նպատակով Եկարյանը 300 օսմանյան ոսկի վերցնելով՝ տաս ընկերների հետ մեկնում է Պարսկահայք: Սակայն առեղծվածային պայմաններում ձերբակալվում է եւ չի կարողանում մասնակցել 1896-ի Վանի հունիսյան ինքնապաշտպանությանը: 1896-ից հետո բանտից ազատվելով՝ 40 զինված մարտիկների հետ վերադառնում է Վան եւ զոհված Մկրտիչ Ավետիսյանի փոխարեն ստանձնում ինքնապաշտպանության ղեկավարությունը՝ այս անգամ կազմակերպելով Վասպուրականից Պարսկաստան գաղթած տարաբախտ ժողովրդին օգնություն կազմակերպելու գործը:

Հետաքրքրական է, որ զինատար խմբով Եկարյանը հանդիպում է Խանասորի արշավանքի ղեկավարների հետ եւ մերժում նրանց իրենց միանալու առաջարկը՝ պատճառաբանելով այդ գործողության անիրատեսությունն ու գնած զենքերը վտանգի ենթարկելու անխոհեմությունը: Միաժամանակ խոստանալով, որ կփակի մազրիկցիներին օգնության եկող ուժերի ճանապարհը: Այդպես էլ լինում է. կրակի տակ առնելով Սաֆալ-Թութանի կիրճը՝ նա փախուստի է մատնում նրանց եւ մեծ օգնություն ցույց տալով խանասորցիներին:

Օգտվելով 1908թ. սահմանադրության ընձեռած հնարավորությունից, Եկարյանն էլ է վերադառնում Վան եւ, հակառակ բոլոր այն մեծաթիվ գործիչների, որոնք ոգեւորված թուրքական արեւելահամ խոստումներից, անհիմաս ու ավելորդ էին համարում նրա ու նրա համախոհների «հնացած» ջանքերը, նախապատրաստվում է ինքնապաշտպանության: Սակայն ինքն էլ է ի վերջո տեղի տալիս եւ լծվում խաղաղ աշխատանքի: Սակայն սկսված Առաջին աշխարհամարտի հարմար առիթից օգտվելով թուրքերը ձեռնամուխ եղան իրենց վաղեմի ճիվաղային ոլանի՝ հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ծրագրի իրագործմանը, այսինքն՝ ցեղասպանության:

Վանի ու Վասպուրական աշխարհի հայությունը ոտքի ելավ պաշտպանելու իր տունուտեղը, պատիվն ու կյանքը: Քաղաքական տարբեր ուժեր ներկայացնող Վանում 1915թ. ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար հերոսամարտի նախօրեին Եկարյանի ղեկավարությամբ ստեղծվեց Ջինվորական մարմին-շտաբը՝ Բուլղարացի Գրիգորի, Կայծակ Ռաֆելի, Փանոս Թերլեմեզյանի, Գաբրիել Սեմերճյանի, Հովհաննես Գալիկյանի (Արամ Մանուկյանը իրականացնում էր քաղաքական ղեկավարությունը) անդամակցությամբ: Անդրադառնալով Վանի ինքնապաշտպանության պատրաստություններին, Եկարյանը հուշագրում է. «Մեր ուզելովը չէր, որպէսզի կռուինք, ան մեզի պարտադրուեցաւ»: Հայերի պաշտպանական գիծը կազմված էր հինգ շրջաններից, 73 դիրքից: Պաշտպանական ուժերի կազմում էին՝ 71 խմբապետ, 1915 զինվոր, 505 հրացան, 540 մաուզեր՝ զինամթերքի հետ միասին: 1915-ի ապրիլի 7-ին սկսված կռվին թուրքերը կենտրոնացրել էին կանոնավոր բանակի ավելի քան 7 հազար զինվոր, որոնց միացել էին հինգ հազարից ավելի քուրդ ելուզակներ:

Վանի գոյամարտի ռազմական ղեկավարությունն իրականացնելիս Եկարյանը դրսեւորում է անկոտրում կամք եւ կազմակերպչական տաղանդ: Այս ամենի շնորհիվ նա մեծ հարգանք էր նվաճել քաղաքի ամենատարբեր խավերի ու խմբավորումների շրջանում: Նրանից պատկառում էին բոլորը, համախմբվում նրա շուրջը. «Եկարյանի հաղորդական հայրենասիրությունը եւ առինքնող անձը՝ կանոնավոր դիմագիծ, երազկոտ հայկական աչքեր, քով քովի կբերեին ռամկավարն ու դաշնակը, հնչակն ու վերակազմյալը, արմենականն ու անկախը, հայն ու ասորին»:

1915-ի մայիսին ռուսական բանակն առաջապահ ունենալով հայկական կամավորական գնդերը, մտավ Վան: Մեկամսյա համառ հերոսամարտի շնորհիվ բնաջնջումից փրկվել էր 150 հազար իր ավելի վասպուրահայությունը: Սակայն ուշքի չեկած՝ վանեցին ստիպված եղավ հրաժեշտ տալ իր տուն ու տեղին, հայրենի օջախին, բռնելով գաղթի ճամփան: Եկարյանը կազմակերպում է գաղթողների զինված պաշտպանությունը: Այդ հոգսերով տարված՝ նա կորցնում է ընտանիքը:

1915-ի սեպտեմբերին ռուսները նորից մտնում են Վան եւ գնդապետ Դերմենին նշանակում Վանի իբրեւ ռուսական նահանգի կուսակալ: Վերջինիս խնդրանքով Վերաբինաց հանձնաժողովը երկրապահ գնդի հրամանատար է նշանակում Արմենակ Եկարյանին, տեղակալ Կիմ Չանգալյանին: Նրանք ստիպված էին սեփական միջոցներով հայթհայթել ոչ միայն զենք, այլեւ հանդերձանք, ձիեր եւ սնունդ: Ի վերջո գունդը շարժվում դեպի Վան՝ խնդիր ունենալով անկոտրուս Վան հասցնել սահմանագլխին հավաքված շուրջ 10 հազար գաղթականությանը, միաժամանակ այդ ընթացքում հավաքելով ահավոր վիճակի մեջ թափառող որբերին:

Սակայն Երկրապահ գնդին վիճակված չէր երկար գործել. ցարական կառավարությանը ձեռնտու չէր թեկուզ փոքրաթիվ, բայց զուտ հայկական ռազմական ուժի առկայությունը: Եկարյանը շատ ջանքեր թափեց, սակայն դրանք անօգուտ եղան: Ստիպված հրաժարական ներկայացնելով հայ փրկության նվիրյալը իրեն հավատարիմ 20 քաջերով մնում է Վանում՝ պատրաստ պաշտպան կանգնելու քաղաքին: Սակայն Վանում «սեւ» լուրեր էին շրջում նոր նահանջի մասին, որոնք շուտով դառնում են իրականություն: Հայ քաղաքական ուժերը կրկին ստիպված էին կազմակերպել Ջինվորական մարմին՝ այս անգամ ժողովրդի նահանջը անկոտրուս կազմակերպելու համար: Ղեկավարներից մեկը Եկարյանն էր, որին խնդրում են ստանձնել ամենակարեւոր ուղղությունը՝ Բերկրիի գծի պաշտպանությունը:

Այլեւս չհանդուրժելով վաս բեմադրված հակահայ խեղկատակություններին, հիսաթափվելով ցարիզմի հայադավ քաղաքականությունից, Եկարյանը 1916-ի հուլիսի 30-ին հասնում է Իգդիր եւ ապա Վաղարշապատի վրայով անցնում է Թիֆլիս: ՀՍՌ կուսակցության հրահանգով նա շուտով մեկնում է Կիլիկիա, ուր պիտի գար զորավար Անդրանիկը՝ կազմակերպելու կիլիկյան հայկական ուժերը, ապահովելու Կիլիկիայի ինքնավարությունը: Ֆրանսիական իշխանությունները, սակայն, արգելում են զորավարի մուտքը Կիլիկիա: Հարկավոր էր մեկը, որ կարողանար կազմակերպել կիլիկյան զորական ուժերը. «Աչքերը կփարին Վանի փրկարար Եկարյանին»: Միհրան Տամատյանի եւ այլ նշանավոր գործիչների հետ Եկարյանը մշակում է ծրագրեր, հավաքագրում զինվորական ուժեր, ամեն ինչ անում է, որպեսզի փրկեն Կիլիկիան, սակայն Ֆրանսիան որոշել էր Կիլիկիան վերադարձնել թուրքերին, ինչը եւ Անկարայի դաշնագրով արեց 1921-ի հոկտեմբերի 21-ին: Հուսախաբ Եկարյանն այս անգամ էլ թողնում է Կիլիկիան եւ մեկնում Պոլիս, այնուհետեւ տեղափոխվում Եգիպտոս:

Յուղանկար. գործ՝ Սուքիաս Թորոսյանի

Շուրջ չորս տասնամյակ նա մարտնչեց թուրքական բռնակալության դեմ: Հայդուկ հսկաների անտառում նա բարձրացավ որպես մի կաղնի, որի շառաչյունը միշտ ուղեկցել է ժամանակակիցներին: Միշտ լավատես, անկոտրում հավատով, ունակ մտավոր թռիչքների, բայց եւ իրատես անձնավորություն էր. «Դրական մարդ էր Ա. Եկարյան, կիավատար խոստումներու, բայց կպահանջեր հող, հաստատուն գետին մը ոտքին տակ: Օդային ծրագիրներ, հավանականության վրա կայք հաստատել եւ հենուլ օտար հույսերու վրա՝ անհաշտ էին անոր հետ: Հաճախ կիիշեր Վանա ռուսական խորհրդավոր նահանջները, որոնք ջուրը ձգած էին Արեւմտահայաստանի ծրագիրը»: Հայրենիքի ցավով տառապած, հայդուկային բազմամյա կյանքում կրած դառնություններից, հայավեր ցնցումների բովում տվայտած նրա մարմինը շատ էր տկարացել՝ Եգիպտոսում վրա հասած ժանտախտին դիմակայելու համար: 1925թ. հոկտեմբերի 20-ին 55-ամյա հերոսը կնքեց իր մահկանացուն: Երախտապարտ հայերը նրա մարմինն ամփոփեցին Ս. Մինաս ազգային գերեզմանատան մեջ, որտեղ էլ 1950-ի հունվարի 8-ին, մեծ հանդիսավորությամբ կատարվում է նրա կիսանդրիի բացումը:

Այսօր էլ Ա. Եկարյանը պատկանում է այն գործիչ-ֆիդայիների թվին, ում մասին սփյուռքում ավելի շատ գիտեն, ավելի շատ են մեծարում, քան մայր հայրենիքում: Կարծում եմ լիովին հասունացել ժամանակը, պարզապես դրա հրամայականն է Հայաստանի Հանրապետությունում, ինչու չէ նաեւ Արցախի Հանրապետությունում, Եկարյանի անունով փողոցներ անվանակոչվեն, դպրոց կամ զորաջոկատ, մարզասրահ ու զբոսայգի, որտեղ դրվի նաեւ նրա արձանը կամ կիսանդրին: Քանի որ երախտապարտ հայ ժողովուրդը պատմության ոչ մի անկյունադարձում երբեք չի մոռացել իր հերոսներին, սակայն Եկարյանի դեպքում կարծես այդպես չէ:

Խմբ. կողմից.- *Սեպտեմբերի կեսերին Ռամկավար Ազատական կուսակցությունը Սիսիան քաղաքում ստեղծեց հրաձգարան՝ մեր աղջիկներին ու պատանիներին անվճար հրաձգության դասեր տալու նպատակով: Հրաձգարանը կոչվեց անմահանուն Արմենակ Եկարյանի անունով:*

10-18.10.2017

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 10

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրյուսել

Եվրոպայի մայրաքաղաք Բրյուսելը ոչ միայն միջազգային կազմակերպությունների առանցքային կենտրոնակետն է, այլեւ սփյուռքահայության հավաքատեղի, հարթակ՝ ուր նախորդ շաբաթ հյուրընկալեց մեր հայրենակիցներին՝ անցկացնելու Եվրոպահայերի չորրորդ համագումարը:

Աշխարհասփյուռ հայերն համախմբվել էին Բրյուսելի «Հայ տանը»՝ միասին կիսելու հայությանն առնչվող մտահոգություններն ու խնդիրները, խորհելու հայանպաստ ուղիներ, գաղափարներ փոխանակելու եւ քննարկելու բոլոր այն խոչընդոտներն ու դրանց հնարավոր լուծումները, որոնք եվրոտայններին հասու կդարձնեն Հայ դատի պահանջներին՝ դրանց արդար լուծում գտնելու համար:

Եվրոպահայերի համագումարն իր բնույթով կարելի է համարել ոչ միայն քաղաքական-գաղափարախոսական սկզբունքներ ընդգրկող հարթակ, այլեւ աշխարհասփյուռ հայերին միմյանց մոտեցնելու, միմյանց հետ նոր ծանոթություններ ստեղծելու եւ ամենակարեւորը՝ միասնական լինելու, հայեցի հոգեբանությունն ամրապնդելու ժամադրավայր:

Բրյուսելի հայկական կենտրոնն այդ օրերին մարդաշատ էր: Հ.Յ.Դ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի նախաձեռնությամբ կազմակերպած երկօրյա համագումարին մասնակցում էին Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ը, Արցախի հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայկական իրավական կենտրոնի նախագահ Քեն Հաչիկյանը (նստավայրը՝ Վաշինգտոն), Հայ դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տերխաչատրյանը, Եվրոպական խորհրդարանի պատգամավորներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ եւ ամենակարեւորը՝ Եվրոպայի տարբեր երկրներում ապրող մեծաթիվ հայեր:

Համաժողովի սկզբում Հ.Յ.Դ. Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ **Գասպար Կարապետեանն** ամենայն մանրամասնությամբ խոսեց հանձնախմբի կողմից տարված եւ տարվող տարաբնույթ աշխատանքների մասին: Նա շեշտեց Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Արցախի խնդիրը միջազգային հարթակներում առավել ճանաչելի դարձնելու համար ֆրանսիական եւ ֆլամանական խորհրդարանների հետ հետեւողական քայլերի կարեւորությունը:

Վերջին տարիներին հանձնախմբի նվիրումն անհամեմատ ընդգծուն է, եւ օրերս ֆլամանական խորհրդարանում ստեղծվել է Արցախի հետ բարեկամության խումբ՝ Արցախի հիմնահարցը միջազգային հանրությանն առավել իրազեկելու համար:

Հարկավ, յուրաքանչյուր նվիրվածություն չգնահատված չի մնում, հատկապես արցախցիների կողմից: Արցախի նախագահը դատարկաձեռն չէր եկել Բրյուսել: Նա իր հետ էր բերել իր հերթական «Երախտագիտություն» շքանշանը եւ մեծ խանդավառությամբ, հպարտորեն պարգեւատրեց Հ.Յ.Դ. Եվրոպայի հանձնախմբին՝ Արցախի անկախության ճանաչման գործում ակտիվ ներդրում ունենալու համար : Ընդհանրապես Արցախի նախագահն իր խորին շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր սատարել եւ սատարում են Արցախին :

Հիշեցնենք, որ նույն օրը մոսկովյան բանտում իր մահկանացուն էր կնքել Արցախի մեծ բարերար, Արցախը ծաղկեցնող Լեւոն Հայրապետյանը, ով ժամանակին նույնպես «Երախտագիտություն» շքանշանով էր պարգեւատրվել : Սակայն այդ օրը, դահլիճում, Արցախի նախագահն, Արցախին սատարողներին շռայլ խոսքեր հնչեցնելով, մեկ բառով անգամ հարկ չհամարեց հիշատակել Արցախին տարիներ ի վեր զորակցող Լեւոն Հայրապետյանի անունը...

Արամ Ա. կաթողիկոսն իր խոսքում հիշատակեց, որ մեր պահանջը պետք է լինի միջազգային հարթակներում, որ մեր դատը մարդու իրավունքների դատ է եւ ժամանակը հասունացել է գործելու միջազգային օրենքներով եւ մեր պահանջատիրությունը տեղափոխել իրավական դաշտ: «Մեր ազգային պահանջատիրության հիմքը նաեւ Արցախի ժողովուրդին ինքնիշխանության պահպանման հիմքն է», խորհրդ ելեւէջներով ասում էր կաթողիկոսը, ընդգծելով, որ Հայ դատի պայքարին պետք է տալ մարտունակություն, ճկունություն եւ այն դուրս հանել նաեւ իսլամական աշխարհի այն երկրներ, ուր հնարավոր կլինի ազգային պահանջատիրության նպաստավոր գործեր կատարել: Կաթողիկոսն անցյալի պատմական վարուվերումներից խոսելիս ընդգծեց Սիսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջատիրության դաշտը, ասելով, որ այն սովորական հայց չի, այլ մեր ժողովրդի արդար իրավական իրավունքը:

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Եվրոպահայերի համագումարը պատմական հզոր իրողություն որակելով նշեց, որ Ցեղասպանությունից հետո Եվրոպան իր դռները բացեց հայերի առջեւ, քանի որ ծանոթ էր հայի ստեղծարար ուժին: («Ազգ»ի խմբագրության կողմից «մեղրով կտրեմ» տիկին նախարարի խոսքը՝ Ֆրանսիան, որ իբր «ամենահյուրընկալ» երկիրն է եղել հայերի համար, միայն 2-րդ համաշխարհայինից հետո է քաղաքացիություն տվել հայերին, մինչ այդ նրանց «ստեղծարար ուժը» չարաչար օգտագործելով «Ռենոյի» ավտոմեքենաշինական գործարաններում: **Խմբ.):** Արցախի միջազգային ճանաչման հիմնահարցը գերառաջնություն համարելով նա հիշեցրեց, որ Եվրոպան դատապարտել եւ չեղարկել է սալինյան որոշումները, բայց մինչ օրս Արցախի բռնակցման խնդիրը չգիտես ինչու արդիական չէ, այնինչ Եվրոպան պետք է հետամուտ լինի իր հարեւան ժողովրդի արդար պահանջին:

Համագումարին իր խոսքն էր բերել նաեւ Եվրոխորհրդարանի պատգամավոր, հայերի մեծ բարեկամ **Ֆրանկ Էնգելը**: Լյուքսեմբուրգի պատգամավորն իր ելույթի առաջին իսկ պահին հիշատակեց մալթացի լրագրող Դաֆնե Գալիցիային, ով նախորդ օրը սպանվել էր ավտոմեքենայի պայթունից, քանի որ բացահայտել էր Ադրբեջանի եւ Մալթայի վարչապետի կոռուպցիոն համագործակցությունը եւ նրանց կապերը Պանամայի օֆշորային գործում:

Արդարության համար հարկ է նշել, որ Հայաստանի քաղաքական վերնախավը միջազգային հարթակներից ազնվություն եւ անաչառություն է հայցում, բայց ամենեւին անտեսում է նախ սեփական ժողովրդի նկատմամբ ազնիվ եւ անաչառ լինելու կարեւորությունը եւ «մարդկային արժեքներ» բարձրաձայնելուց առաջ անտեսում սեփական ժողովրդի մարդկային իրավունքները: Եվ եթե Եվրոխորհրդի պատգամավորն իր ելույթը սկսեց հիշատակելով Մալթայի լրագրողի մահվան փաստը, այդ իսկ պահին անգամ, Հայաստանի ներկայացուցիչներից եւ ոչ մեկի մտքով չանցավ հետեւել մարդկային արժեքներ գնահատող եվրոպատգամավորի օրինակին եւ հիշատակել բարերար Լեւոն Հայրապետյանի անունը: Չէ՞ որ ճակատագրի հեգնանքով երկուսն էլ նույն օրն էին մահացել:

Համաժողովում ելույթներ ունեցան նաեւ իրավական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ. առանցքային թեման դարձյալ Հայոց ցեղասպանության եւ Արցախի հիմնահարցը առավել լայն լսարանին հասու դարձնելու խնդիրներն էին:

Եվրոպահայերի համագումարը երկրորդ օրը շարունակվեց Եվրոխորհրդարանում: Լյուքսեմբուրգի պատգամավոր **Ֆրանկ Էնգելն** համոզմունք հայտնեց, որ նախ Հայաստանը պետք է ճանաչի Արցախի անկախությունը. «Մինչեւ Հայաստանը չճանաչի Արցախի անկախությունը, ասաց նա, այլ երկրներ չեն ճանաչի»:

Նույնակարծիք էր նաեւ Իսրայելի պատմաբան Յահիր Աուրոնը: Նա հավելեց, որ Իսրայելն առաջիկա տարիներին չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը, եթե անգամ քաղաքական փոփոխություններ էլ լինեն, միեւնույնն է՝ Իսրայելը Ցեղասպանության հարցում կատեգորիկ կմնա : Ըստ պատմաբանի, Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ Իսրայելում տարիներ ի վեր բազմաթիվ փորձեր են արվել: Խնդիրը քննարկվել է նաեւ անվտանգության եւ կրթական հանձնախմբերում: Ըստ նրա, եթե կառավարությունն ազատ կողմնորոշվելու իրավունք տա կոալիցիոն անդամներին, ապա խորհրդարանում Ցեղասպանության ճանաչման կողմ քվեարկողների թիվը բավարար կլինի. 120-ից 85-ը կողմ կքվեարկեն: Մինչ օրս ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից միայն 34 են ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այնպես որ առջեւում դեռ շատ անելիքներ կան, նկատեց հրեա պատմաբանը:

Եվրոխորհրդարանում Արամ Ա կաթողիկոսը նրբորեն տեղեկացրեց, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է քննության ընդունել Սիսի կաթողիկոսության ու եկեղեցապատկան սեփականության վերադարձի հայցը: Կաթողիկոսը զարմանքով եւ վրդովմունքով նկատեց, թե ինչպես է հնարավոր, որ միայն մեկ դատավորով որոշում է կայացվել՝ քննության չառնելով 900 էջանոց լրջագույն հայցը: Բայցեւայնպես, Արամ Ա կաթողիկոսը վճռական շեշտեց , որ գոյություն ունեն սեփականության վկայականներ, որոնք հիմնավոր փաստաթղթեր են դատարանի համար:

Հայ դատի կենտրոնական խորհրդի նախագահ **Հակոբ Տերխաչատրյանն** «**ԱԶԳ**»ի հետ զրույցում ասաց, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այս որոշումը ոչ թե հայցի մերժում է նշանակում, այլ հայցը քննության չընդունել: Հայցը նախ Թուրքիայի բոլոր դատական ատյաններով պետք էր մերժված լիներ, եւ հետո միայն ներկայացվեր Ստրասբուրգի դատարան:

Եվրոխորհրդարանում Հայաստան-Եվրոպա արտաքին քաղաքական գրասենյակի աշխատակից **Զովանի Կրեմոնին** ընդգծեց նոյեմբերին ԵՄ-Հայաստան ստորագրվելիք պայմանագրի կարեւորությունը, հուսալով, որ հայկական կողմն այս անգամ ավելի վճռական կլինի:

Վերջում Հ3Դ Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ **Գասպար Կարապետեանը** հույս հայտնեց, որ չորս տարի անց, եվրոպահայերի հաջորդ համագումարին, այստեղ քննարկված շատ հարցեր արդեն լուծված կլինեն:

Ընդհանուր առմամբ համագումարը կարելի էր որակել որպես ծանոթության նոր կապող օղակ՝ աշխարհասփյուռ հայերին մերձեցնող հարթակ:

Եվրոպահայերի չորրորդ համագումար

Բրյուսելը սփյուռքահայերի մերձեցման հարթակ

Նրանց հետապնդում են նաեւ Թուրքիայից դուրս

Էրդողանի բռնապետական քաղաքականության հետեւանքով Գերմանիայում ապաստան գտած փախստականները բողոքում են, որ իրենց տվյալները, ներառյալ գտնվելու վայրը, որպես թարգմանիչ աշխատող թուրք գործակալների կողմից փոխանցվում են թուրքական կառավարության խոսափողը հանդիսացող լրատվամիջոցներին, որոնք էլ հրապարակում են այդ տվյալները:

«Der Spiegel» պարբերականի ու «ARD» հանրային հաղորդումների համատեղ հետաքննության արդյունքում պարզ է դարձել, որ Գերմանիայի ներգաղթի դաշնային իշխանությունների (BAMF) լսումներին մասնակցած թուրք փախստականները մի քանի օր անց «ահաբեկիչ» եւ «դավաճան» որակումներով հայտնվել են թուրքական մամուլի էջերում եւ հեռուստահաղորդումներում: Քանի որ այդ անձանց Թուրքիայում ապրող հարազատներն անգամ չեն իմացել նրանց գտնվելու վայրը, կասկածներ են հարուցվել, որ հենց «BAMF»ի շարքերում որպես թարգմանիչ աշխատողներն են այդ փոխանցումների հեղինակները: Արդյունքում 15 թարգմանիչներ վտարվել են իրենց աշխատանքից «չեզոքություն չպահպանելու» մեղադրանքով: **Ֆուատ Բալջի** անունով մի ուսուցիչ, որ կապեր է ունեցել Թուրքիայի ընդդիմության հետ, պատմել է, թե ինչպես իրեն BAMF-ի թուրք աշխատակիցը երեք ժամ հարցաքննել է, մինչեւ որ նյարդային ցնցումներ է ունեցել: «Դա նման էր դատարանում խաչաձեւ հարցաքննության», ասել է նա:

Մյուս կողմից HDK թուրքական կուսակցության գերմանական մասնաճյուղի անդամ Երկին Էրդողանը նշել է. «Ակնհայտ է, որ այդ չակերտավոր թարգմանիչների միջոցով Թուրքիան լրտեսությամբ է զբաղվում Գերմանիայում, որտեղ 3 միլիոն թուրք է ապրում: Գերմանիան պետք է շատ զգույշ լինի: Թուրքիայի բազուկները շատ երկար են»: Ըստ Բեռլինից «DW»ի հաղորդման ներկայիս BAMF-ում աշխատող 500 թուրք թարգմանիչներ կան: Հ.Ծ.

Մովսես Պչաքճեանի կեանքին ու գրականութեանը նուիրուած ցերեկոյթ

Տեղի կ՚ունենայ շաբաթ 28 հոկտեմբեր 2017 կէսօրէ ետք ժամը 14-ին Ուշի գիւղի Մշակոյթի տան մէջ, կազմակերպութեամբ «Հայաստան» հրատարակչութեան: Պիտի գործադրուի օրուան պատշաճ ծրագիր: Սիրով հրաւիրուած են փափաքողները:

Ժամը 13-ին յատուկ փոխադրամիջոց պիտի տրամադրուի Հայաստանի Գրողներու միութեան տան առջեւէն:

«Հայաստան» հրատարակչութիւն

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 11

Իրանն ու Սիրիան համաձայնության կգա՞ն Իդլիբի հետ

Հնարավոր է նոր պատերազմ

Իրանյան Քրդստանի տարածաշրջանային կառավարության ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը պաշտոնական հաղորդագրություն է հրապարակել իրանյան շիա կազմավորումների եւ քրդական «փեշմերգա» ջոկատների բախումների մասին: Երկու կողմերից կան զոհեր: Իրանյան եւ քրդական ուժերի բախումներում պայմաններում «Իսլամական պետության» ջոկատները Քիրքուկից հարավ երեք գյուղ են գրավել: Սիրիայում պարտություն կրելով՝ ջիհադիստները սկսել են ակտիվանալ Իրանի հարավում: Այս կապակցությամբ ԱՄՆ հետախուզության նախկին գործակալ **Մայքլ Պրեգենտը** հայտարարել. «Ինձ թվում է՝ Բաղդադը ավելի կարեւոր է համարում պայքարը քրդերի, քան Իրանում մնացած ԻՊ հենակետերի դեմ»:

Քրդական ինքնավարության ղեկավար **Մասուդ Բարզանին** աշխարհի քրդերին կոչ է արել օգնել Իրանի հարձակմանը ենթարկվող իրենց հայրենիքին: Նրա խոսքերով, միջազգային ընկերակցությունը մտադիր է մոռանալ «Իսլամական պետության» դեմ մղվող պայքարում զոհված քուրդ մարտիկներին: Միեւնույն ժամանակ Բաղդադը կարգադրել է ձերբակալել քրդական ինքնավարության ղեկավարի տեղակալ Կուրաս Ռասուլ Ալիին՝ սադրիչ համարելով նրա այն հայտարարությունը, ըստ որի իրանյան բանակը եւ դաշնային ոստիկանությունը օկուպացիոն ուժեր են: Բացի դրանից, Բաղդադը կարգադրել է ձերբակալել երեք բարձրաստիճան քուրդ գործիչների, որոնց մեղադրում է սեպտեմբերի 25-ի հանրաքվեի կազմակերպման համար:

Նման քայլերը սահմանափակում են Էրբիլ-Բաղդադ երկխոսության հնարավորությունը: Ինչպես նշում է Քրդստանի հայրենասիրական ճակատի առաջնորդ **Ջալալ Թալաբանին**, քրդական եւ իրանյան ուժերը պատերազմի եզրին են: Դա նշանակում է, որ իրանյան բարդ ու բազմաթայլ խաղը թեւակոխում է նոր շրջափուլ, որտեղ իրենց առավել ակտիվ կդրսեւորեն արտաքին խաղացողները: Առաջին փուլին կմասնակցեն Իրանը, Սիրիան, Թուրքիան եւ Իրանը: Ինչպես նշում է թուրքական Hurriyet թերթը, սեպտեմբերի 25-ի հանրաքվեի նախօրեին Անկարան վստահ էր, թե հաղթաթղթերը իր ձեռքին են: Մինչդեռ հիմա, ճիշտ է, ոչ պաշտոնական մակարդակով, Անկարան խոստովանում է, որ հանրաքվեից հետո Իրաքի հյուսիսում ամրապնդվեցին Իրանի դիրքերը:

Թուրքիան սկսում է հայտարարել իրաքցի թուրքոմանների իշխանության իրավունքի մասին: Իրաքի եւ Սիրիայի հյուսիսում ճամբարներ ունեցող եւ հենց Թուրքիայում մարտնչող ՔԲԿ-ին մեղադրում է Էրբիլի եւ «Իսլամական պետության» հետ կապեր ունենալու մեջ: Ավելին, Թուրքիան վախենում է Դամասկոսի եւ Բաղդադի դաշինքի պայմաններում շիաների ազդեցության ուժեղացումից: Բայց միեւնույն ժամանակ Թուրքիան, Սիրիան եւ Իրանը սպիտված են համագործակցել սիրիական ուղղությամբ, որտեղ ունեն ընդհանուր շահեր: Արդյոք սա չի՞ նշանակում, որ քրդերն ամեն կողմից շրջապատված են այսպիսի պետություններով, որոնք չեն ուզում նույնիսկ ինքնավար տեսնել նրանց:

Արտաքին տպավորությունն այդպիսին է: Բայց այսօր խաղի մեջ են մտնում արդեն ծանրաբայինները: Էրբիլից հարավ քրդերի եւ շիա աշխարհազորայինների բախումների կապակցությամբ արդեն մտահոգություն են հայտնել ամերիկացիները, նշում է «Ռեգնում» գործակալությունը: ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարության մեջ նշվում է. «Վիճելի տարածքների վրա դաշնային իշխանության վերականգնումը բնավ չի փոխում դրանց կարգավիճակը: Դրանք վիճելի կմնան այնքան ժամանակ, մինչեւ որ դրանց կարգավիճակը կարգավորվի Իրաքի սահմանադրությանը համապատասխան: Մենք ուշի ուշով հետեւում ենք իրադարձություններին եւ կողմերին կոչ ենք անում ձեռնպահ մնալ սադրիչ գործողություններից ու բռնարքներից»:

Չի լռում նաեւ Իսրայելը՝ միակ երկիրը, որը պաշտպանեց իրաքցի քրդերի անկախությունը: Ինչպես հաղորդում է Reuter՛s գործակալությունը, վարչապետ **Բենիամին Նաթանյահուն** բանակցում է տարբեր տերությունների հետ՝ փորձելով կանխել Իրաքի զինված ուժերի հարձակումները Իրանյան Քրդստանի վրա: Նաթանյահուն այդ հարցը հեռախոսազրույցներում քննարկել է Գերմանիայի կանցլեր Մերկելի, ՌԴ Պուտինի, ԱՄՆ նախագահ Թրամփի վարչակազմի պաշտոնատար անձանց եւ Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հետ:

Որոշ տեղեկությունների համաձայն, ՄԱԿ-ի ԱԽ-ն հատուկ բանաձեւ է պատրաստում Իրանյան Քրդստանի իրադրության վերաբերյալ: Ֆրանսիական Le Monde թերթի կարծիքով, եթե մարտերը նույնիսկ նոր տարածքներ չընդգրկեն էլ, միջազգային ընկերակցությունը պարտավոր է Իրաքին նախազգուշացնել, որ «Իսլամական պետության» դեմ մղվող պայքարի շրջանակներում երկիր կարող են բերվել միջազգային ուժեր: Խնդիրն այն է, որ Դամասկոսը եւ Բաղդադը պետք է համաձայնության գան կամ պատերազմ սկսեն քրդերի դեմ, որոնք նույնպես մարտնչել են ջիհադիստների դեմ: Ըստ երեւույթին իրականանում են փորձագետների այն կանխատեսումները, որոնց համաձայն Իրաքում եւ Սիրիայում «Իսլամական պետության» պարտությունը խաղաղություն չի բերի ոչ միայն այդ երկրներին, այլեւ ամբողջ տարածաշրջանին: **Պ.Ք.**

Անջատականությունը Եվրոպայում եւ հետխորհրդային տարածքում

Աշխարհում կաճի չճանաչված պետությունների թիվը

Կատալոնիայի հանրաքվեից հետո Եվրոպայում նկատվում է անջատական շարժումների աճխուժացում: Մասնավորապես Իտալիայի հյուսիսի երկու առավել զարգացած մարզերում՝ Լոմբարդիայում եւ Վենետոյում հոկտեմբերի 22-ին անցկացվեցին հանրաքվեներ հանուն ֆինանսական ինքնավարության ընդլայնման: Իտալիայի բնակչության մեկ քառորդն ապրում է այդ մարզերում, որոնք տալիս են երկրի ՀՆԱ 30 տոկոսը: Նախնական տվյալներով Լոմբարդիայում հանրաքվեին մասնակցել է ընտրողների 40 տոկոսը, Վենետոյում՝ 60 տոկոսը: Երկու մարզերում էլ հանրաքվեի մասնակիցների 95 տոկոսն արտահայտվել է ֆինանսական ինքնավարության օգտին, քանի որ այդ մարզերը Հռոմին տալիս են ավելի շատ, քան ստանում են:

Իսպանիայում Կատալոնիայի անկախության բացահայտ հռչակման դեպքում Մադրիդը կարող է երկրի սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն վերացնել Կատալոնիայի ինքնավարությունը, արձակել խորհրդարանը, հայտարարել արտակարգ դրություն եւ այլն: Իսպանիայի կառավարությունը կարող է կիրառել անջատականության կասեցմանն ուղղված սովորական միջոցներ, որոնցից արդեն կիրառվել են հետխորհրդային տարածքում՝ Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդավիայում, հիմա նաեւ Ուկրաինայում: Նրանք բոլորը կորցրել են իրենց երբեմնի տարածքների մի մասի վերահսկողությունը: Խնդիրն այն է, որ այդ երկրները փորձում են շեշտը դնել Եվրոմիության վրա, որպեսզի հասնեն իրենց տարածքային ամբողջականության վերականգնմանը:

Ինչպես նշում է Deutsche Welle ռադիոկայանը, Կատալոնիան կարող է առաջին ահազանգը դառնալ Եվրոմիության համար: Ավելի լայն ինքնավարության են ձգտում Շոտլանդիան, Հարավային Տիրոլը, Ալանդյան կղզիները, Ֆլանդրիան, գուցե նաեւ Բավարիան: Ինչպես նշում է գերմանական ռադիոկայանի մեկնաբան **Բեռնդ Ռիգերտը**, որոշ տարածաշրջաններ ձգտում են ոչ թե անկախության, այլ լոկ ավելի լայն ինքնավարության: Ուրիշներն էլ, ինչպես Շոտլանդիան եւ Կատալոնիան, ձգտում են անկախության: Պատահական չէ, որ Եվրոպացի որոշ քաղաքական գործիչներ հանդես են գալիս Եվրոմիությունը «Տարածաշրջանների Եվրոպա» դարձնելու կոչերով: Գոյություն ունեն նման հայեցակարգի մշակումներ:

Եթե շարունակենք նմանությունների որոնումը Եվրոպայի եւ հետխորհրդային տարածքի այսպես կոչված անջատական շարժումների միջեւ, ապա ակնհայտ է ժամանակագրական որոշակի խզում: Հետխորհրդային տարածքում անջատականության առաջին ալիքը ի հայտ եկավ Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդավայի եւ Ուկրաինայի ազգայնական քաղաքականության ալիքի վրա: Չնայած Ռուսական կայսրության եւ ապա ԽՍՀՄ-ի կազմում լինելուն, դրանցում կատարված հեղաշրջումները հանգեցրին էթնիկ-ազգային եւ դավանանքային հակամարտությունների: Ըստ որում, այդ հանրապետություններում դեռ չէր ավարտվել հենց անվանադիր ազգի ձեւավորումը:

Ավելին, ինչպես նշում է «Ռեգնում» գործակալությունը, իրենց տարածքի մի մասը կորցրած հետխորհրդային հանրապետությունները չգնացին ժողովրդավարացման, ազգային փոքրամասնությունների քաղաքական կարգավիճակի բարձրացման եւ իրավունքների ընդլայնման ուղիով: Գործի դրվեցին ազգամիջյան հակամարտությունների կարգավորման ավտորիտար եւ ուժային մեթոդներ: Ադրբեջանում խաղարկվեց թյուրքական ազգայնամոլական խաղաքարտը եւ անտեսվեցին Լեռնային Ղարաբաղի հայերի ձգտումները: Համանման գործընթացներ տեղի ունեցան Վրաստանում, Մոլդավիայում, Ուկրաինայում: Որտեղ ազգայնականությունը դրսեւորվեց «յուրայիններին» «օտարներից» զատելու մեջ: Սա է հետխորհրդային անջատականության սկզբունքային տարբերությունը եվրոպականից, թեեւ Եվրոպան նույնպես հայտնվել է սեփական աջատականների դեմ ուժային մեթոդների կիրառման եզրին: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, այնտեղ 1990-ականներին հաջողվեց կանխել շրջանային անջատականության փորձերը:

Չի կարելի բացառել, որ անջատականությունները հետխորհրդային տարածքում, Եվրոպայում եւ Մերձավոր Արեւելքում սկսեն շարժվել միմյանց ընդառաջ՝ ունենալով միջազգայնացված հակամարտությունների սեփական «ուղեբեռներ»: Այս կապակցությամբ Եվրոպայի խորհրդի նախագահ **Դոնալդ Տուսկը** հայտարարել է, որ տեղի ունեցող երեւույթները մտահոգիչ են, քանի որ Կատալոնիայում եւ այլուր քաղաքական կարգավորմանը միջամտելու համար Եվրոմիությունը չունի համապատասխան կառույցներ:

Եվրոմիությունում ձեւավորվող քաղաքական նոր իրավիճակը հետխորհրդային տարածքի հետ դրա աղերսների տեսակետից լուրջ վերլուծության կարիք ունի, նշում է ռուս պատմաբան **Սանկիսլավ Տարասովը**: Առայժմ կարելի է կատարել նախնական հետեւություններ. հակամարտությունների ասպարեզ դարձած յուրաքանչյուր պետության մեջ առկա է կենտրոնական կառավարման ճգնաժամ: Կենտրոնը, լինի Մադրիդը թե հետխորհրդային որեւէ մայրաքաղաք, բաց է թողել ազգային ինքնության ձեւավորման գործընթացին նպաստելու հնարավորությունը: Ամբողջ Եվրոպայում ազգային ինքնորոշմանն ուղղված անջատականության ալիքը Իսպանիայից մինչեւ Դոնբաս եւ Շոտլանդիայից մինչեւ Կովկաս՝ ահագնանում է: Հիմա դժվար թե հաջողվի այն կանգնեցնել միայն իրավաբանական միջոցներով:

Պ.Ք.

AZG NEW SHABAT.QXD 25/10/2017 21:15 Page 12

Չեխահայ ձեռնարկատերը հաղթեց թուրք-գերմանական հզոր ընկերությանը Թուրքիայում

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
«ՕՐԵՐ» ամսագիր,
Պրահա

Չեխիայում գործող հայտնի «Մառլենկա» Ինթերնեշընլ ընկերությունը, որի սեփականատերը ձեռնարկատեր Գեւորգ Ավետիսյանն է, մեկ տարվա բանակցություններից հետո հաղթեց գերմանական հանրահայտ Dr.Oetker ընկերության Թուրքիայի ներկայացուցչությանը, որը թուրքական շուկայում վաճառում էր «Մառլենկա» թխվածքի պատրաստման փոշին՝ նույն անվանումով ու տեսքով:

Ինչպես ՕՐԵՐ-ին տված հարցազրույցում ասաց ընկերության սեփականատեր **Գեւորգ Ավետիսյանը**, դեռեւս 2016 թվականի վերջին Թուրքիայում գործող իրենց առեւտրային գործընկերները ահազանգել են, որ խանութներում եւ մեծ սուպերմարկետներում հայտնվել է «Մառլենկա» թխվածքի պատրաստման փոշին՝ Dr.Oetker ապրանքանշանով: Ավելին, նույնիսկ համացանցով եւ հեռուստատեսությամբ տրվել են «Մառլենկա» տորթի պատրաստման եղանակների տեսահոլովակները:

«Այս փաստը մեզ շատ զարմացրեց, քանի որ նման հանրահայտ ընկերության կողմից այսպիսի կեղծիք չէինք սպասում: Անմիջապես կապվեցինք Բռնոյում գործող մեր գործընկեր փաստաբանական գրասենյակի հետ, նրանց խորհրդով նաեւ կապ հաստատեցինք Թուրքիայում գործող GUN փաստաբանական ընկերության հետ, եւ անմիջապես լծվեցինք կատարված կեղծիքի բացահայտմանը: Նախեւառաջ ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, պահանջեցինք, որպեսզի շուկայից հանվեն «Մառլենկա» անվանումով թխվածքի փոշու բոլոր տուփերը: Dr.Oetker-ի Թուրքիայի ներկայացուցչությունը այս ողջ ընթացքում փորձում էր ձգձգել հանդիպումները, եւ գրեթե 5 ամիս չէինք կարողանում վերջնական պայմանավորվածության գալ: Միայն երբ զգուշացրինք, որ դատական գործ կհարուցենք, անմիջապես սեղանի շուրջ նստեցին եւ ստորագրեցին մեր պահանջները՝ ապահովելու Թուրքիայում գործող հայտնի ընկերության հեղինակությունը:

Գեւորգ Ավետիսյան, Նշան Ավետիսյան

Այսպիսով, մեկ տարի անց մենք կարողացանք հաղթել Dr.Oetker-ի թուրքական ներկայացուցչությանը եւ սիրողներին շուկայից հանել կեղծ «Մառլենկա»-ները,- ասաց մեզ հետ զրույցում Գեւորգ Ավետիսյանը:

Ի դեպ, նշենք, որ սա «Մառլենկան» կեղծելու առաջին դեպքը չէ: Տարիներ առաջ ընկերությունը հաղթեց չեխական մի այլ ընկերության, որը անվան չնչին տարբերությամբ «Մառլենկա» տորթեր էր արտադրում, իսկ Չինաստանում երեք տարի առաջ հաղթեց մի ընկերության, որը նույն անունով թխվածքը ոչ միայն արտադրում էր, այլեւ փորձում էր խոչընդոտել իրական «Մառլենկա» թխվածքի մուտքը չինական շուկա:

Սակայն այս պատմության մեջ հետաքրքրականն այն է, որ Dr.Oetker համաշխարհային գիգանտ համարվող ընկերությունը, որի կենտրոնատեղին գերմանական Բիելֆելդն է, ունի մոտ 400 ընկերություն եւ 30 հազար աշխատակից, իրեն թույլ է տվել նման կեղծիքի գնալ: Ամեն դեպքում, փաստաբաններն այն կարծիքին են, որ առանց գլխամասային ընկերության գիտության, դժվար թե թուրքական մասնաճյուղը նման քայլի դիմեր: Հոկտեմբերի 13-ին ստորագրված պայմանագրով, Dr.Oetker-ի թուրքական մասնաճյուղը պարտավորվել էր ոչ միայն շուկայից հանել բոլոր տեսակի «Մառլենկա» անվանումով թխվածքի փոշու տուփերը, այլեւ ապագայում բացառել դրա արտադրությունը:

Այսպիսով սա հայ գործարարի առաջին հաղթանակն է Թուրքիայի տարածքում, եւ հատկանշական է այն առումով, որ այժմ այս բացահայտումից հետո, գերմանական մի այլ ընկերություն ցանկանում է օրինական պայմաններով նման թխվածքի փոշի արտադրել՝ ստանալով «Մառլենկա» ընկերության հավաստագիրը:

Ի դեպ, Գեւորգ Ավետիսյանի ջանքերով 2014 թվականից՝ 100-ամյակի նախօրյակին, Հայոց ցեղասպանության թեման մտավ չեխական կրթական համակարգի մեջ՝ «Մոդեռնի դեյինի» (Արդի պատմություն) կայքէջի միջոցով, որ նախատեսված է հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

Հիշեցնենք, որ «Մառլենկա» ընկերությունը հիմնադրվել է 2003 թվականին չեխական Ֆրիդեկ-Միստեկ քաղաքում հայ գործարար Գեւորգ Ավետիսյանի կողմից, եւ 14 տարիների ընթացքում դարձել է մեղրով թխվածքի ամենախոշոր արտադրությունը Եվրոպայում: Տարեկան արտադրվում է մոտ 2 միլիոն տորթ, գրանցելով 20 տոկոսի աճ: Իսկ ընդհանուր տեսականու արտադրանքի քանակը անցնում է 7 միլիոնից եւ տարածվում է աշխարհի 44 երկրներում: «Մառլենկան» ճանաչվել է Չեխիայի լավագույն ընկերություններից մեկը:

www. orer.eu

Միկրոէլեկտրոնիկայի միջազգային 12-րդ օլիմպիադան վերահաստատում է Հայաստանի առաջատար դիրքը մասնագիտական կրթության ոլորտում

Ամենամյա օլիմպիադան իրականացվում է ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո: Այս տարի օլիմպիադան հյուրընկալել է 24 երկիր ներկայացնող 671 մասնակից՝ Արգենտինայից, Հայաստանից, Արցախից, Բրազիլիայից, Չիլիից, Կոլումբիայից, Եգիպտոսից, Վրաստանից, Գերմանիայից, Հոնգ Կոնգից, Իրանից, Հորդանանից, Պերուից, Ֆիլիպիններից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից, Սերբիայից, Թաիլանդից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Ուկրաինայից, Ուրուգվայից, ԱՄՆ-ից եւ Վիետնամից:

Մրցույթն անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլը, որը կայացել է մասնակից երկրներում, ներառել է թեստային առաջադրանք՝ ուղղված ունակությունների մակարդակի գնահատմանը: Մրցույթի երկրորդ փուլում մասնակիցները պետք է կատարեին ամենաբարդ մակարդակի՝ համալիր լուծումներ պահանջող ինժեներական առաջադրանքներ:

Մրցույթի եզրափակիչ փուլը կայացել է Երեւանում, «Սինոփսիս Արմենիա» ընկերության կրթական բաժնում (SAED), որտեղ 41 մասնակից ներկայացրել է 20 երկիր՝ Հայաստանը, Արցախը, Բրազիլիան, Չինաստանը, Եգիպտոսը, Վրաստանը, Գերմանիան, Իրանը, Հորդանանը, Պերուն, Ֆիլիպինները, Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, Սերբիան, Թաիլանդը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Ուկրաինան, Ուրուգվայը, ԱՄՆ-ը եւ Վիետնամը:

Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային 12-րդ օլիմպիադայի հաղթողներն իրենց մրցանակները ստացել են Երեւանում՝ 2017թ. հոկտեմբերի 25-ին: Այսպես՝ առաջին մրցանակը՝ ոսկե մեդալը, նվաճել է Ֆլորին Բուրչան (Գերմանիա), երկրորդ մրցանակը՝ արծաթե մեդալը, ստացել է Մախսա Ախշամը (Իրան), եւ երրորդ մրցանակը՝ բրոնզե մեդալը, ստացել է Կատարինա Կատրալովիչը (Սերբիա):

«Հայաստանը ՏՀՏ ոլորտում իր մտավոր ներուժով դրսեւորվելու՝ տարիների փորձ եւ զգալի արդյունք ունի: Գործընկերոջ հետ ոլորտի առաջընթացին ուղղված մեր ջանքերն այդ ներուժը գնահատելու եւ հետագա զարգացմանը նպաստելու գործնական քայլերից են: Մեր երկիրն առավել ներկայանալի պետք է դարձնել աշխարհին: Այդ ամենը կարեւոր է ոչ միայն առաջատարության հավակնելու, մրցակցային առավելություն ունենալու, այլեւ՝ տնտեսական

զարգացում ապահովելու տեսանկյունից: Թեեւ ճանապարհը պահանջում է համբերություն եւ զգալի ներդրումներ, արդյունքը դրսեւորվելու է երկարաժամկետ կտրվածքում»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտում անցկացված մրցանակաբաշխությունն ավարտվել է բարեգործական համերգով եւ ընդունելությամբ:

Միջոցառումը կազմակերպվել է էլեկտրատեխնիկայի եւ էլեկտրոնիկայի ինժեներների ինստիտուտի (IEEE) Թեստային տեխնոլոգիաների տեխնիկական խորհրդի (TTTC) հետ գործակցությամբ: Օլիմպիադայի գլխավոր կազմակերպիչն է «Սինոփսիս Արմենիա» ընկերությունը, իսկ գլխավոր գործընկերը՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

Օլիմպիադայի հովանավորներն են «Յունիֆոմփ», ընկերությունը, ՏՀՏ գործատուների միությունը, «Վիասֆեր Տեխնոպարկ», «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերությունները եւ «Փյունիկ» հիմնադրամը:

Օլիմպիադային մասնակցությամբ աչքի են ընկել ոլորտի՝ մինչեւ 30 տարեկան տարիքային խմբի առավել տաղանդավոր ուսանողները: 2017թ.-ի օլիմպիադայի շրջանակում մրցույթային թեմաները ներառել են «Թվային IC նախագծումը եւ փորձարկումը», «Անալոգային եւ խառն ազդանշանային IC նախագծումը եւ փորձարկումը», «Կիսահաղորդիչ սարքերը եւ տեխնոլոգիաները», ինչպես նաեւ «Էլեկտրոնային նախագծային ավտոմատացման մաթեմատիկական եւ ալգորիթմային խնդիրները»:

Սահմանամերձ Մարտիրոս գյուղն ամբողջությամբ լուսավորվել է

Ավելի քան 700 տարվա պատմություն ունեցող եւ պատմամշակութային արժեքներով հարուստ Վայոց Ձորի սահմանամերձ Մարտիրոս գյուղը 1990-ական թվականներից մնացել էր մութ փողոցներով: Երկու փուլով իրականացված ծրագրի արդյունքում՝ իրավիճակն արմատապես փոխվել է:

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործակցությամբ իրականացվող «Այլընտրանքային էներգիա» նախագծի շրջանակում, դեռեւս 2016թ.-ի աշնանը Մարտիրոսում տեղակայվել էր 52 LED լուսարձակ՝ լուսավորելով 1716մ երկարությամբ տարածք: Ընթացիկ տարում, ծրագրի երկրորդ փուլով, էներգախնայող արտաքին լուսավորության LED լուսարձակների թիվն ավելացել է եւս 38-ով, ինչի արդյունքում լուսավորվել է գյուղն ամբողջությամբ:

Լուսավորվել է նաեւ հին գյուղի տարածքը, որտեղ գործող եկեղեցին այսօր էլ այցելուներ ունի:

Ժամանակակից համակարգի գործարկմանը մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, FPWC-ի հիմնադիր Ռուբեն Խաչատրյանը, Զառիթափ համայնքի ղեկավար Սիմոն Բաբայանը եւ գյուղի բնակիչները:

«Ժամանակի եւ հանգամանքների բերումով՝ մայրաքաղաքի եւ հատկապես սահմանամերձ գյուղերի զարգացման տեմպերի միջեւ մեծ տարբերություն է առաջացել: Դա խանգարում է երկրի համաչափ զարգացմանը: Գործընկեր կառույցի հետ՝ տարբեր ծրագրերով, տարիների մեր ջանքերն ուղղել ենք մարզերում ենթակառուցվածքների զարգացմանը: Ուրախ ենք արձանագրել, որ այս գյուղում եւս արտաքին լուսավորության խնդիրը հաղթահարվել է՝ ապահովելով բնակիչների անվտանգությունը: Դա ամենակարեւոր, սակայն միակ առավելությունը չէ. համայնքում էներգախնայող համակարգի տնտեսական արդյունավետությունը կարող են գնահատել առաջիկայում»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Բնապահպանական եւ էներգախնայող LED լուսարձակների շահագործումը տնտեսապես արդյունավետ է բյուջետային համեստ միջոցներ ունեցող գյուղերի համար: Այսպիսի համակարգի օգտագործումը 80 տոկոսով նվազեցնում է էներգիայի ծախսը՝ թեթեւացնելով համայնքի ֆինանսական բեռը: Տնտեսված գումարները կարող են նպատակաուղղվել այլ խնդիրների կարգավորմանը:

Լուսատուները գյուղի փողոցները կլուսավորեն ամռանը 21:00-ից մինչեւ 00:00, իսկ ձմռանը՝ 18:00-ից մինչեւ 23:00: Տոնական օրերին լուսավորություն կապահովվի ամբողջ գիշեր:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 26.10.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: